

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ՈՒՂԵՐՁԸ

[Հայերեն - Armenian – أرمني]



Դոկ. Բիլել Ֆիլիփս

(Սուրբ Դավթի Քոլեջ, Ուելսի Համալսարան, Միացյալ
Թագավորություն)



Թարգմանությունը:


EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

رسالة عيسى عليه السلام الصحيحة



د. بلال فيليبس



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام



ISLAM HOUSE

الإسلام من رُبَّاعِيَاتِ الْجَمَالِ



ISLAMHOUSE.COM

THE LARGEST AND MOST AUTHENTIC
FREE REFERENCE TO INTRODUCE ISLAM
IN THE WORLD LANGUAGES

Ամենատղորմած Ալլահի, Գթության Պարզևողի անունով



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիսուս Քրիստոսը ներկայացնում է երկու կրոնների միջև գոյություն ունեցող ընդհանուր կապը, այսօր երկրի վրա ունենալով Քրիստոնեության և Իսլամի ամենաշատ հետևորդները: Հիսուսի ուղերձի և նրա անհատականության տվյալ ուսմունքը հիմնված է այս կապի վրա: Հուսանք, որ ի շնորհիվ այս ուսումնասիրության և Մահմեդականները, և Քրիստոնյաները ավելի լավ կընկալեն Հիսուսի նշանակալիությունը և նրա ուղերձի կարևորությունը:

Ամեն դեպքում, որպեսզի, ճշգրտորեն գիտակցենք Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ուղերձը, մեր ուսումնասիրությունների միջոցով մենք պետք է օբյեկտիվ տեսակետ պահպանենք: Մենք չպետք է թույլատրենք, որ մեր զգացմունքները քողարկեն մեր տեսակետը և այսպիսով, կուրացնեն մեզ ճշմարտությունից: Մենք պետք է ռացիոնալ կերպով դիտենք այս բոլոր խնդիրները և Ամենաբարձրյալի օգնությամբ առանձնացնենք ճշմարտությունը կեղծիքից:

Երբ մենք դիտարկում ենք ամբողջ աշխարհում գոյություն ունեցող կեղծ կրոնների բազմազանությունը և աղանդավոր հավատքները և նվիրվածությունը, որով դրանց հետևորդները կառչում են այդ հավատքներին, ակնհայտ է դառնում, որ այս մարդիկ ի վիճակի չեն գտնել

ճշմարտությունը, իրենց հավատքներին կույր հանձնառության պատճառով: Իրենց համառ կապվածությունը հաճախ հիմնված չէ ուսմունքի մտավոր գիտակցման վրա, այլ ամուր մշակույթի և զգացմունքային ազդեցությունների: Որովհետև նրանք մեծացել են որոշակի ընտանիքում կամ հասարակության մեջ, նրանք ամուր կառչում են տվյալ հասարակության հավատքներին, հավատք ընծայելով, որ նրանք հետևում են ճշմարտությանը:

Միակ ուղղին, ըստ որի մենք կարող ենք գտնել ճշմարտությունը որևէ բանի մասին այն է, որ մենք պետք է տրամաբանորեն և համակարգված մոտեցում ցուցաբերենք: Առաջինը մենք կշռում են վկայությունը և այնուհետ դատում ենք Աստծո տրված մտավորությամբ: Նյութական աշխարհում հիմնավոր մտավորությունը տարբերակում է մարդկանց կենդանիներից, որոնք բնագործ են գործում: Որոշելուց հետո, թե որն է օբյեկտիվ ճշմարտություն, մենք պետք է զգացմունքորեն ըմբռնենք այն: Այո, զգացմունքային ներառումը իր տեղը ունի, սակայն այն պետք է հետևի խնդիրների պատճառաբանված ըմբռնմանը: Չզգացմունքային հանձնառությունը կարևոր է, որովհետև այն հանդիսանում է իրական ըմբռնման վկայություն: Երբ որևէ մեկը լիարժեք և պատշաճ կերպով ըմբռնում է խնդրի իրականությունը, նա հոգեպես և մտավոր պատրաստ է ակտիվ կերպով պաշտպանել այդ ճշմարտությունը:

Տվյալ մտավոր և հոգեկան տեսանկյունից է, որ Հիսուսի ուղերձի խնդիրը և նրա հարմարությունը նրանց, ովքեր ցանկություն ունեն հետևել Աստծուն, վերլուծություն կունենա հետևյալ էջերում:

Դոկ.Բիլել
Ֆիլիպս

Սաուդյան
Արաբիա
1989

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԳՐԵՐԸ

«Հիսուս Քրիստոսի Ճշմարիտ Ուղերձը» նյութը ներառում է երկու հիմնական բաժին. 1. Ուղերձը և 2. Հիսուս Քրիստոսի անհատականությունը: Յուրաքանչյուրը անքակտելի է մյուսից: Հիսուսի ուղերձը ըմբռնելու համար, մենք պետք է գիտակցենք, թե ով է նա: Ամեն դեպքում, որպեսզի մենք հասկանանք, թե ով էր նա, անհրաժեշտ է ճանաչել և հասկանալ նրա ուղերձը:

Գոյություն ունեն երկու հնարավոր ուղղիներ, որոնք կարելի է վերցնել Հիսուս Քրիստոսի անհատականությունը և նրա ուղերձի բովանդակությունը դիտարկելու համար: Մեկը հիմնված է պատմական գրառումների վրա, որոնք կազմել են ժամանակակից պատմաբանները այդ ժամանակահատվածի գրառումներից և մասունքներից և մյուսը գեկույցների վրա, որոնք ներառում են հայտնված Գրերը:

Իրականում, գոյություն չունի մատչելի բավարար պատմական վկայություն, որը մեզ տեղեկացնում է Հիսուս Քրիստոսը ով լինելը կամ որոշումը, թե որն է նրա ուղերձը: Այդ ժամանակարջանի ոչ մի պաշտոնական պատմական փաստաթուղթ Հիսուսի մասին չի պարունակում որևէ իրական արձանագրություն: Աստվածաշնչյան գիտնական Ռ.Թ Ֆրանսը գրում է. «1 –ին դարի ոչ մի մակագրություն չի նշում նրան, կամ ոչ մի առարկա կամ կառույց չի պահպանվել, որը ունի յուրահատուկ կապ նրա հետ»:¹ Հետևյալ փաստը նույնիսկ առաջնորդեց որոշ Արևմտյան

¹ Թայմ, Դեկտեմբեր 18, 1995, էջ.46

պատմաբանների սխալմամբ հայտարարել, որ Հիսուս Քրիստոսը փաստացի երբեք գոյություն չի ունեցել: Ուստի, ուսումնասիրությունը հիմնականում հիմնված է գրերի վրա, որը հաստատում է Հիսուս Քրիստոսի անձը և առաքելությունը: Գրերի խնդիրը պաշտոնապես ճանաչել են և Քրիստոնեությունը և Իսլամը: Ամեն դեպքում, ճշգրտորեն վերլուծելով տեղեկությունը, որը պարունակում է այս կրոնական տեքստերը, էական են դարձնում դրանց վավերականության որոշումը: Արդյո՞ք դրանք փաստագրական վկայության վստահելի աղբյուրներ են, կամ մարդու պատրաստած հեքիաթներ և առասպելները կամ երկուսի խառնուրդը: Արդյո՞ք Աստվածաշնչի Հին և Նոր Կտակարանները աստվածայնորեն հայտնված գրեր են: Արդյո՞ք Ղուրանը վավերական է:

Որպեսզի Աստվածաշունչը և Ղուրանը լինեն Աստծո աստվածային խոսք, նրանք պետք է գերծ մնան անբացատրելի հակասություններից և բովանդակության կամ հեղինակների որևէ կասկածներից: Սա է հանդիսանում այն դեպքը, որ Հին և Նոր Կտակարանների և Ղուրանի պարունակած նյութը այնուհետ կարող է համարվել Հիսուս Քրիստոսի անհատականության տեղեկության վստահելի աղբյուր:

ՎԱՎԵՐԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐ

Ելնելով Քրիստոնեության տարբեր ճյուղերից և աղանդներից շատ գիտնականներ փաստարկել են, որ Աստվածանյաց շատ նյութեր կասկածելի անվավեր են:

«Մարմնավորված Աստծու Առասպելը» աշխատության նախաբանի մեջ, հեղինակը գրում է հետևյալը. «19-րդ դարում, Արևմտյան Քրիստոնեությունը պատրաստեց երկու հիմնական նոր ճշտումներ, ի պատասխան մարդկային գիտելիքների կարևոր ընդլայնման և ի հայտ է բերեց երկրի կյանքի զարգացման ձևերը; և ընդունեց, որ Աստվածաշնչի գրքերը գրել են տարբեր մարդիկ տարբեր իրավիճակներում, որոնք չեն կարող տրամադրել բանավոր աստվածային ապացույց»:²

«Նյուգուիք»³ միջազգային տեղեկատվական ամսագիրը, որտեղ զետեղված էր «Օվ Տեր, Ով գրեց Քո Աղոթքը» հոդվածը, հիմնական Բողոքական աղանդներից մի խումբ աստվածաբաններ, Հռոմեական Կաթոլիկ Աստվածաշնչյան գիտնականներ Ամն-ում, մանրակրկիտ քննություններից հետո նշեցին, որ Նոր Կտակարանի վաղ գրերի, միակ «Տիրոք աղոթքի»⁴ խոսքը, կարելի է զգուշորեն վերագրել Հիսուս Քրիստոսին «հայր» բառին: Սա տեղի է ունենում ըստ սովյալ ուսյալ եկեղեցական գիտնականների բոլոր խոսքերի, որոնք գալիս են «Մեր Հայր» սկսնակ բառակապակցությունից, որը հանդիսանում է

² Մարմնավորված Աստծու Առասպելը էջ. IX

³ Հոկտեմբեր 31, 1988 էջ. 44

⁴ Դուկաս 11:2 և Մատթեոս 6:9-10

Քրիստոնեական աղոթքի հիմքը, ավելացվել են եկեղեցական գրերը դարեր ավելի, ովքեր Ավետարաններից գրառել են վաղ արձանագրությունները:⁵ ԱՄՆ-ի Տ եղեկատվությունը և Աշխարհի Ձեկույցը, ավելի ուշ մեջբերում է գիտնականների խումբ, ասելով որ Կտակարանի մեջ գոյություն ունեցող բառերի ավելի քան 80 տոկոսը, որոնք նկարագրում են Հիսուսին, կարող է անվավեր լինել:⁶ Դա վերաբերվում է Հիսուսի Վերջին Ընթրիքի ընթացքում տեղի ունեցած Հաղորդության ⁷ ճառին. «Վերցրեք, սնվեք, Սա իմ մարմինն է...» և յուրաքանչյուր խոսք, որը ասվում է , կրկնվում է խաչի վրայից:⁸

Լիդսի Համալսարանի Աստվածաբանական և Կրոնական Ուսումնասիրությունների բաժանմունքի Դոկ. Ջ. Ք. Էլիոթը, գրեց «Ստուգել Աստվածաշնչի Արմատները» խորագրով հոդված, որը հրատարակվեց Լոնդոնի Թայմս ամսագրում, 1987 թվականի սեպտեմբերի 10-ին: Այնտեղ նա հայտնում

⁵ Կտակարան խոսքը վերցված է Անգլո-Սաքսոն աստվածախոս տերմինից, որը նշանակում է «լավ պատմություն» որը կապված է լատիներեն Էվանգելիում խոսքի հետ և Հունարեն Էանգելիոն, որը նշանակում է «բարի նորություն» կամ «բարի պատմություն» Նոր Բրիտանիկա Հանրագիտարան, հատոր 5, էջ. 379

⁶ Հաղորդական. Չի նշանակում լինել անիրական կամ մտացածին կամ հանճարեղ. Օքսֆորդ Առաջադեմ Ուսանողի Բառարան էջ. 45

⁷ Հաղորդությունը հացը և գինին է, որը տրամադրում են Քրիստոնեական ծիսակատարության ժամանակ, ինչը հիմնված Քրիստոսի վերջին Ընթրիքի հետ: Օքսֆորդի Առաջադեմ Ուսանողի Բառարան էջ, 410

⁸ Հուլիս 1, 1991, էջ. 57

է, որ. «Ավելի քան 5000 գրեր պարունակում են Նոր Կտակարանի բոլոր բաժինները իրենց բնօրինակ լեզվով: Շարքի ժամանակահատվածը ընկնում է երկրորդ դարից մինչ տպագրության հայտագործումը: Ըստ գնահատականի նրանց միջև ոչ մի համաձայնեցում գոյություն չունի: Անխուսափելիորեն, բոլոր գրավոր փաստաթղթերը ենթակա են պատահական սխալների: Ամեն դեպքում, զարմանալի չէ, որ գոյություն ունեցող աստվածաբանական աշխատությունների մեջ ներկայացվել են դիտավորյալ փոփոխությունները, որպեսզի խուսափեն դրանցից, կամ փոփոխեն հայտարարությունները, որոնք ըստ տպագրչի թվում են տկար: Նույնպես տպագրիչների մեջ գոյություն ունեւ բացատրական մեկնաբանությունների ավելացման միտում:⁹ Հնարավոր է, որ դիտավորյալ փոփոխությունները ներկայացվել են ավելի վաղ փուլում, մինչ Նոր Կտակարանի օրինական կարգավիճակի հաստատումը»:

Հեղինակը շարունակում է բացատրել, որ «ոչ մի արձանագրություն իր ամբողջության մեջ չի պարունակում բնօրինակ, անարատ տեքստեր», և որ «հնարավոր չէ ընտրել տվյալ արձանագրություններից որևէ մեկը և բացառապես հիմնվել դրա տեքստերին, կարծես, դրանք ներառում են բնօրինակ հեղինակների խոսքերի մենաշնորհը»:

⁹ «Մեկնաբանությունը» տեքստի բացատրական հավելումն է: Օքսֆորդ Առաջատար Ուստնողների Բառարան, էջ. 528

Այնուհետ նա ասաց. «Եթե, այնուհետ որևէ մեկը վիճում է, որ բնօրինակ տեքստերը պահպանվել են որևէ տեղ պահպանված¹⁰ հազարավոր գրերի մեջ, ապա անհատը ստիպված է ընթերցել բոլոր տվյալ արձանագրությունները, որպեսզի համակարգված ձևով հավաքի նրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները և այնուհետ տարբերակ առ տարբերակ գնահատի, թե որ արձանագրությունն է հանդիսանում բնօրինակ տեքստը և որը երկրորդականը: Նմանատիպ հեռանկարը վախեցրել¹¹ է շատ աստվածաշնչյան գիտնականների, ովքեր բավարարվում են վստահելով վաղ ժամանակաշրջանի տպագրված տեքստերին, որտեղ կիրառվում են միայն որոշ արձանագրությունների վկայությունը: Նույնիսկ դրանց հիմնված Հունական Նոր Կտակարանի և Ժամանակակից թարգմանությունների վերջերս տպագրված հրատարակությունները, սովորաբար նեղ հիմքերով հետևում են տեքստեր կառուցելու տվյալ գործունեությանը, որը ամբողջովին նման չէ բնօրինակին»:

¹⁰ Այտեղ բառը նշանակում է գոյություն ունեցող, պահպանված:

¹¹ Վախ թվականին տվյալ կրկնօրինակը

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ամենատարածված Աստվածաշնչի, Վերանայված Տիպական Տարբերակի նախաբանի մեջ հեղինակները գրառել են հետևյալը.

«Աստվածաշնչի Վերանայված Տիպական Տարբերակը Ամերիկյան Տիպական Տարբերակի պաշտոնական տեսակն է, որը հրատարակվել է 1901 թվականին, որն էլ իր հերթին հանդիսանում էր Արքա Ջեյմսի Տարբերակը, որը հրատարակվել էր 1611 թվականին...»

«Արքա Ջեյմսի Տարբերակը պետք է մրցակցի 1560 թվականի Ժնևի Աստվածաշնչի հետ իր հայտնի կիրառության մեջ; սակայն վերջում գերակշիռ դիրք է ստացել; և ավելի քան երկու և կես դար անց ոչ մի այլ անգլերեն լեզվով պաշտոնական Աստվածաշունչ չի եղել»:

Արքա Ջեյմսի Տարբերակը դարձավ անգլիախոս մարդկանց «պաշտոնական Տարբերակը»... Մինչդեռ Արքա Ջեյմսի Տարբերակը ունի հսկայական արատներ: Տասնիններորդ Դարի կեսերից սկսած Աստվածաշնչյան ուսումնասիրությունների զարգացումը և շատ արձանագրությունների հայտաբերությունը, որոնք ավելի հին էին քան նրանք, որոնց վրա էր հիմնված Արքա Ջեյմսի Տարբերակը, հայտարարել է, որ տվյալ արատները այնքան շատ են և այնքան լուրջ, որ կարիք ունեն Անգլերեն թարգմանության վերանայման: 1870 թվականին Անգլիայի Եկեղեցին ընդունեց հետևյալ առաջադրանքը: Աստվածաշնչի Վերանայված Տարբերակը հրատարակվել է 1881-1885 թվականներին և Ամերիկյան Տիպական

Տարբերակը, մարմնավորում է Ամերիկյան գիտնականների նախապատվությունները, որի միավորված աշխատանքի հրատարակվեց 1901 թվականին»:¹²

«Նոր Կտակարանի Արքա Ջեյմսի Տարբերակը, հիմնված էր Հունական տեքստերի վրա, պարունակելով տասնչորսերորդ դարի արձանագրությունների ընդօրինակությունների հավաքված սխալները: Էապես Բենզան 1589 թվականին խմբագրել է Հունական տեքստերը, ով շատ սերտորեն հետևել է նրան, ինչ հրատարակել է Էրազմուսը 1516-1535 թվականներին, հիմնված որոշ միջնադարյան արձանագրությունների վրա: Վաղ և լավագույն ութ արձանագրությունները, որոնք Էրազմուսը խորհուրդ էր տվել հասնում է տասներորդ դարից և որոնցից նա օգտվել է նվազագույնս, որովհետև դրանք ամենից շատն են տարբերվում ընդհանուր ստացված տեքստերից; Բենզան ընդունել էր երկու արձանագրությունները, որոնք մեծ արժեք են ներկայացնում, որոնց ժամանակագրությունը հասնում է հինգերորդ և վեցերորդ դարեր, սակայն, նա նվազագույնս է օգտվել դրանցից, որովհետև դրանք տարբերվում են Էրազմուսի հրատարակած տեքստերից»:¹³

«... Ամերիկյան Տիպական Տարբերակը կրկնօրինակել են, որպեսզի պաշտպանեն տեքստը ոչ պաշտոնական փոփոխություններից: 1928 թվականին սովյակ կրկնօրինակը ընդունել է Կրոնական Կրթության

¹² Սուրբ Աստվածաշունչ. Վերանայված Տիպական Տարբերակ, էջ. iii

¹³ Իբիդ էջ.v

Միջազգային Խորհուրդը և ուստի անցել է Միացյալ Նահանգների և Կանադայի եկեղեցիների իշխանության տակ, որոնք հաղորդակցվում են տվյալ Խորհրդի հետ, իրենց կրթության վարչություններով և հրատարակություններով: Խորհուրդը նշեց գիտնականների կոմիտե, ովքեր պատասխանատու են Ամերիկյան Տիպական Տարբերակի տեքստերի համար և պարտավորեցրել հետաքննություն, թե արդյոք անհրաժեշտ է հետագա վերանայում... Երկու տարի անց որոշում կայացվեց, որ գոյություն չունի 1901 թվականի տարբերակի վերանայման կարիք և որոշում կայացվեց պահպանել այն, որը կմնա այժման մոտ Թինդայլ – Արքա Ջեյմսի ավանդույթին, որքան հնարավոր է... 1937 թվականին վերանայումը ըստ Խորհրդի ձայների դարձավ պաշտոնական»:¹⁴

«Երեսուներկու գիտնականներ ծառայել են որպես Խորհրդի անդամներ, ովքեր պատասխանատու են վերանայման համար և նրանք ապահովել են վերանայումը և խորհրդակցությունը համագործակցող հիսուն աղանդների ներկայացուցիչների Խորհրդատվական վարչության հետ միասին... Նոր Կտակարանի վերանայված Տիպական Տարբերակը հրատարակվեց 1946 թվականին»:¹⁵ «Աստվածաշնչի Վերանայված Տիպական Տարբերակը, որը ներառում է Հին և Նոր Կտակարանները

¹⁴ Սուրբ Աստվածաշունչ. Վերանայված Տիպական Տարբերակ, էջ. Iii-iv

¹⁵ Իբիդ էջ. iv

հրատարակվեց 1952 թվականի Սեպտեմբերի 30-ին և արժանացավ մեծ ընդունելության»:¹⁶

Աստվածաշնչի Վերանայված Տիպական Տարբերակի մեջ Նոր և Հին Կտակարանների Արքա Ջեյմսի Տարբերակի հիմնական քանակը, որոնց եզրահանգել են գիտնականները, ավելի ուշ լրացվել և հեռացվել են տեքստից և տեղադրվել են ծանոթագրությունների մեջ: Օրինակ, հատվածի մեջ, Ավետարան ըստ Հովհաննեսի 8.7, որը խոսում է դավաճանների մասին, ում պետք է քարկոծել: Հիսուսը ենթադրյալ պետք է, որ ասած լինի. «Թող նա, ով մեղք չունի ձեր միջից, առաջինը քարը նետի նրան»: 1952 թվականի Աստվածաշնչի Վերանայված Տիպական Տարբերակի ծանոթագրությունները հայտնում են. «Ամենահնագույն հեղինակությունները հեռացրել են 7.53-8.11-ը»:¹⁷ Մինչդեռ Վատիկանի հ. 1209 ձեռագիրը և Մինայի ձեռագրի կողքերը սկսած 4-րդ դարից չեն պարունակում տվյալ տասներկու տարբերակները, Աստվածաշնչյան գիտնականները եզրահանգել են, որ այս խոսքերը չեն կարող վերաբերվել Հիսուսին: Մեկ այլ օրինակ է հանդիսանում հատվածը, որը վերաբերվում է Հիսուսին և Գրեթի մեջ կիրառվում է որպես Երրորդության մեջբերման վկայություն: Հովհաննես 5.7-ի մեջ ենթադրվում է, որ Հիսուսը ասել է. «Գոյություն ունեն երեքը, ովքեր երկնքում կրում են գրառումը Հայրը, Խոսքը և Սուրբ Հոգին.

¹⁶ Իբիդ vi

¹⁷ Սուրբ Աստվածաշունչ. Վերանայված Տիպական Տարբերակ էջ.

և այս երեքը հանդիսանում են մեկ»:¹⁸ Աստվածաշնչյան հայտնի գիտնական Բենջամին Ուիլսոնը գրառում է, որ տվյալ տեքստը, որը վերաբերվում է «երկնային վկայությանը» գոյություն չունի որևէ Հունական արձանագրության մեջ, որոնք գրվել են 15-րդ դարից առաջ գտնվող ժամանակահատվածում: Ուստի, Վերանայված Տիպական Տարբերակի մեջ, առանց նույնիսկ ծանոթագրության տեքստից տվյալ տարբերակը ջնջված է: Ամեն դեպքում, որպեսզի նույնությամբ պահպանել Վերանայված Տիպական Տարբերակի տարբերակների ամբողջական քանակը Արքա Ջեյմսի Տարբերակի օրինակով, վերանայողները տարբերակ 6-ը բաժանեցին երկու տարբերակի:

Նոր Կտակարանի 1971 թվականի, երկրորդ թարգմանությունը, շահեկան էր տեքստային և լեզվաբանական ուսումնասիրությունների առումով, որոնք սպագրվել են մինչ 1946 թվականի¹⁹ Վերանայված Տիպական Տարբերակի առաջին թողարկումը: Ուստի նախկինում հեռացված որոշ հատվածներ վերականգնվեցին և ոմանք էլ ընդունեցին դրանք: «Երկու հատվածներ, Մարկոս 16.9-20-ի երկար վերջավորությունները և կնոջ պատիժը, ում բռնել էին դավաճանության մեջ, Հովհաննես 7.53-8.11, տեքստի մեջ վերականգնվեց, առանձնանալով դրանից դատարկ տարածքով, որոնց ուղեկցում էին տեղեկատվական

¹⁸ Մուրբ Աստվածաշունչ. Արքա Ջեյմսի Տարբերակ

¹⁹ Մուրբ Աստվածաշունչ. Վերանայված Տիպական Տարբերակ էջ.

նշումները... Նոր ձեռագրերի աջակցության շնորհիվ, երկու հատվածները Ղուկաս 22.19 Ե -20 և 24.51բ, վերականգնվել են տեքստին և մեկ հատված Ղուկաս 22.43-44, տեղադրված են նշումներ, ինչպես Ղուկաս 12.39-ի դարձվածքներն են»:²⁰

²⁰ Իբիդ էջ. vii

ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ Աստվածաշնչյան գիտնականների, նույնիսկ Հին Կտակարանի և Ավետարանների գրքերի հեղինակությունը գտնվում է կասկածի տակ:

ԹՈՐԱՆ

Աստվածաշնչի առաջին հինգ գրքերը «Փենթաթեուչ»²¹ Հրեական Աստվածաշնչի հինգ գրքերը, սովորաբար առնչվում են Մարգարե Մովսեսին²², ամեն դեպքում տվյալ գրքի մեջ գոյություն ունեն շատ տարբերակներ, որոնք նշում են, Մարգարե Մովսեսի գրառման անհնարությունը: Օրինակ Երկրորդ Օրենք 34.5-8-ը նշում է. «⁵Այսպիսով Մովսեսը, Տիրոջ ծառան մահկանացուն կնքեց այնտեղ Մոաբի երկրում, ըստ Տիրոջ խոսքի, ⁶և նա հուղարկավորեց նրան Մոաբ երկրի հարթավայրում, հակառակ Բեթ-փեորի; սակայն մինչ օրս ոչ ոք տեղյակ չէ նրա հուղարկավորության վայրի մասին: ⁷Մովսեսը հարյուր քսան տարեկան էր, երբ կնքեց իր մահկանացուն; նրա աչքը թույլ չէր, ոչ էլ նրա բնական դեմքը թուլացած: ⁸Եվ Իսրայելի ժողովուրդը ողբաց Մովսեսին Մոաբի հարթավայրերում երեսուն օր; այնուհետ Մովսեսի ողբի և սգի օրերը ավարտվեցին»: Բավական ակնհայտ է, որ

²¹ Մանդոց, Գիբր Ելաց, Ղևիտացիներ, Թվեր և Երկրորդ Օրենք

²² Ուղղափառ Հրեաները հայտնում են, որ Թորան, առաջին հինգ գրքերի Հրեական անուններն են, որոնք ստեղծվել են 974 սերունդ առաջ, մինչ աշխարհի արարումը: Ըստ նրանց, Աստված 40 օր թելադրել է Թորան Մինայ լեռան վրա, այնպիսի վերջնական և անփոփոխ կերպով, որ մեղք է հայտնել. Որ Մովսեսն, իրենց է գրել որևէ տառ անգամ:

Մարգարե Մովսեսի մահվան տեղեկությունները գրառել է այլ մեկը:

Որոշ Քրիստոնյա գիտնականներ բացատրել են տվյալ հակասությունները առաջարկելով, որ Մովսեսը գրել է իր գրքերը, սակայն հետագա մարգարեները, ինչպես նաև ոգենչված դպիրները հավելումներ են կատարել: Ուստի, ըստ այդմ, տեքստը, իր ամբողջականությամբ մնացել է որպես Աստծո հայտնության գիր: Ամեն դեպքում այս բացատրությունը չի համապատասխանում ուսումնասիրություններին, որովհետև ընդմիջարկված տարբերակների ոճը և գրական բնորոշումը նույնն են, ինչ տեքստերի հիշեցումը:

19-րդ դարում Քրիստոնեական Աստվածաշնչի գիտնականները սկսեցին բանավիճել «կրկնակ» իմաստի շուրջ, որը հայտնվեց Թորայում: Սրանք պատմություններ են, որոնք հայտնվել են երկու անգամ, և ամեն անգամ տարբեր մանրամասներով: Դրանցից են աշխարհի արարման երկու տարբերակները, Աստծո և Աբրահամի ուխտը, Հակոբի անվան փոփոխությունը Իսրայելի և Մովսեսի քարից ջուր ստանալը:²³

Մովսեսի պաշտպանները ասացին, որ կրկնակները հակասական չեն, սակայն ուսանելի են: Նրանց նպատակն է ուսուցանել մեզ Թորայի ավելի խորը, նուրբ իմաստները: Ամեն դեպքում, շուտով առաջադեմ գիտնականները, հեռացրեցին տվյալ հայտարարությունը, նկատելով, որ ոչ միայն որոշ հաշվարկներ հակասում են, այլև կրկնակները

²³ Ով է գրել Աստվածաշունչը էջ. 54-70

բաժանվում են երկու առանձին հաշիվների, յուրքանյուրը համապատասխանաբար կիրառում է Աստծո տարբեր անվանում: Մեկը, Աստծոն միշտ վերագրում է Յեհվա/ Յեհովա անվանումը, որի փաստաթուղթը կոչվում է «J»: Մյուսը վերաբերվում է Աստծոն որպես Էլոհիմ և կոչում է «E»:²⁴ Գոյություն ունեն այլ տարբեր գրական բնորոշումներ, որոնք ընդհանուր են մեկ կամ այլ փաստաթղթի մեջ: Ժամանակակից լեզվաբանական վերլուծությունը, ըստ պրոֆեսոր Ռիչարդ Ֆրիդմանի²⁵ նշում է, որ Մովսեսի հինգ գրքերը Մ.Թ.Ա իններորդ, ութերորդ, յոթերորդ և վեցերորդ դարերի Հրեերենի խառնուրդ են: Ուստի Մովսեսը, ով կենդանի էր Մ.Թ.Ա 13-րդ դարում այնքան հեռու էր Աստվածաշնչի Հրեերենից, որքան Շեքսպիրը ժամանակակից անգլերենից:

Հինգ Գրքերի հետագա ուսումնասիրությունը առաջնորդեց բացահայտման, որ այն պատրաստվել է ոչ թե երկու այլ չորս հիմնական աղբյուրներից: Հայտաբերված է, որ որոշ պատմություններ ոչ միայն հանդիսանում եկրկնակներ, այլև եռակներ: Նաև հայտնաբերվել են տվյալ փաստաթղթերի լրացուցիչ գրական բնորոշումներ: Երրորդ

²⁴ 19-րդ դարի վերջին Գերմանացի գիտնական Հուլիոս Ուելիաուսենը, առաջինն էր, ով ճանաչեց հինգ գրքերի բազմազան աղբյուրները:

²⁵ Ռիչարդ Քլիոթ Ֆրիդման Սան Դիեգոյի, Կալիֆորնիայի շամալսարանի պրոֆեսոր էր; Նա իր դոկտորական կոչումը ստացավ Հարվարդի շամալսարանի Հրեական Աստվածաշունչը աշխատությամբ, նաև նա հեղինակն է Ով Գրեց Աստվածաշունչը վիճաբանական աշխատությունը:

աղբյուրը կոչվեց «P» քահանայության համար և չորրորդը կոչվեց «D» Ծննդոց համար:²⁶

Շատ դժվար է որոշել բնօրինակ տեքստի նվազագույն լրացումների չափը: Ուստի, կասկածի մեծ ստվեր է ընկնում գրքերի ամբողջական հեղինակության վրա:

Վերանայված Տիպական Տարբերակի հավելվածին վերագրված «Աստվածաշնչի Գրքեր»-ը, գրված են Հին Կտակարանից մնացած ավելի քան մեկ երրորդ գրքերի հեղինակությունների հետ:

Գրքեր	Հեղինակներ
Դատավորաց	Հնարավոր է Սամուել
Ռութ	Հնարավոր է Սամուել
Թագավորություններ Ա	Անհայտ
Թագավորություններ Բ	Անհայտ
Թագավորություններ Գ	Անհայտ
Թագավորություններ Դ	Անհայտ
Մնացորդաց Ա	Անհայտ
Եսթեր	Անհայտ

²⁶ Աստվածաշնչի Թարգմանչաց Բառարան հատոր 1, էջ. 756 և հատոր 3 էջ. 617; Տես նույնպես Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 14, էջ. 773-4

Հակոբ	Անհայտ
Ժողովող	Կասկածելի
Հովհաննես	Անհայտ
Մաղաքիա	Ոչինչ հայտնի չէ

ԱՊՈԿՐԻՖ

(Աստվածաշնչյան գրեր, որոնք կանոնակարգված գրերի մաս չեն կազմում)

Աշխարհի Քրիստոնյաների ավելի քան կեսը Հռոմի կաթոլիկներ են: Նրանց Աստվածաշնչի տարբերակը լույս է տեսել 1582 թվականին, Հերոնիմոսի Լատինական Տարբերակով և վերանայվել է Դուայում 1609 թվականին: Ի տարբերություն Արքա Ջեյմսի Տարբերակի Հին Կտակարանի Հռոմեական Կաթոլիկ Տարբերակը պարունակում է յոթ լրացուցիչ գրքեր, որը ճանաչել է Բողոքական աշխարհը: Լրացուցիչ գրքերը վերագրվում են Ապոկրիֆին, այսինքն կասկածելի հեղինակության և 1611 թվականին Բողոքական Աստվածաշնչի գիտնականները Աստվածաշնչից հեռացրել են այն:

ԱՎԵՏԱՐԱՆԵՐ

Արամերենը հանդիսանում էր Պաղեստինի Հրեաների խոսակցական լեզուն: Ուստի, հավատում են, որ Հիսուսը և նրա աշակերտները խոսել և ուսուցանել են Արամերեն:²⁷ «Հիսուսի արարքների և ասացվածքների վաղ բանավոր սովորույթները անկասկած կրկնվում են Արամերեն: Ամեն դեպքում, չորս Ավետարանները գրվել են ամբողջովին տարբեր բարբառներով, ընդհանուր Հունարենով, որով խոսում էին քաղաքակիրթ Միջերկրածովյան աշխարհը, որը ծառայում էր Եկեղեցու մեծամասնությանը, որն էլ և դառնում էր Հելլենիստական, հունախոս, փոխարինելով Պաղեստինյանին: Արամերենի հետքերը փրկվեցին Հունական Ավետարանների մեջ: Օրինակ Մարկոս 5:41» Վերցնելով նրա ձեռքը նա ասաց նրան, «Թալիթհա չումի»; որը նշանակում է «Փոքրիկ աղջիկ, ես ասում եմ քեզ բարձրացիր»»: և Մարկոս 15:34, «Եվ իններորդ ժամին, Հիսուսը ողբաց բարձրաձայն», «Էլոյի, Էլոյի լա՞մա

²⁷ Արամերենը Սեմական լեզվաընտանիքին պատկանող լեզու է, որը նման է Աքքադերենին, որպես Մ.Թ 6-րդ և 7-րդ դարերի Մերձավոր Արևելքի ընդհանուր լեզու: Հետագայում այն դարձավ Պարսկական Կայսրության պատանական լեզուն: Արամերենը փոխարինեց Հրեերենին որպես Հրեաների լեզու; Հին Կտակարանի գրքերի մի մասը, օրինակ Դանիել, Եսաա գրված են Արամերենով, ինչպես նաև Բաբելոնյան և Երուսաղեմի Թալմուդը: Նրա մեծ ազդեցության ժամանակահատվածը ընկնում է Մ.Թ.300 650 թվականները, որին հաջորդում է Արաբերենը: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 1, էջ. 516

սաբախտանի», որը նշանակում է «Իմ Աստված, իմ Աստված, ինչու՞ Դուք ինձ չեք փրկում»»:²⁸

Չնայած, ըստ եկեղեցական գիտնականների, Նոր Կատակարանի Մարկոսի Ավետարանը, համարվում է Ավետարաններից ամենահինը, այն չի գրել Հիսուսի աշակերտը: Հիմնվելով Ավետարանի վկայության վրա, Աստվածաշնչյան գիտնականները եզրակացնում են, որ ինքը Մարկոսը Հիսուսի աշակերտը չէր: Ավելին, ըստ նրանց, նույնիսկ անորոշ էր Մարկոսի ով լինելը: Հնագույն Քրիստոնյա հեղինակ Էսեբիուսը (325 թվ.) հաղորդեց, որ մեկ այլ հնագույն հեղինակ Պապիասը (130 թվ.) առաջինն էր, ով Ավետարանը վերագրեց Հովհաննես Մարկոսին, Պողոսի ուղեկցորդին:²⁹ Մյուսները առաջարկեցին, որ միգուցե Պետրոսի և այլոց գրերը խոսում են նրա մեկ այլ անհատ լինելու մասին:

Նույնը վերաբերվում է այլ Ավետարաններին: Չնայած Մատթեոս, Դուկաս և Հովհաննես Հիսուսի աշակերտների անուններն են, Ավետարանների հեղինակները, ովքեր կրում են նրանց անունները, հայտնի աշակերտներից չէին, այլ հանդիսանում էին անհատներ, ովքեր գործածում էին աշակերտների անունները, որպեսզի հավանություն տան իրենց հաշիվներին: Փաստորեն բոլոր բնօրինակ

²⁸ Ամերիկյանա Հանրագիտարան հատոր 3, էջ.654

²⁹ Հինգ Ավետարաններ էջ. 20 և Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 14, էջ. 824: Նոր Կատակարանի Մարկոսի տարբեր մեջբերումների համար տեսեք հետևյալ գլուխները Գործք 12:12, 25; 13:5; 15:36-41; Կոլոսացիներ 4:10, Տիմոթեոս 4:11; Փիլիպոս 24; և Պետրոս Ա 5:13

Ավետարանները տարածվում էին անանուն կերպով: Հեղինակային անունները վաղ եկեղեցում, ավելի ուշ վերագրվել են նրանց անհայտ կերպարներից.³⁰

ԳՐՔԵՐ	ՀԵՂԻՆԱԿՆԵՐ
Ավետարան Մատթեոսի	Անհայտ ³¹
Ավետարան Մարկոսի	Անհայտ ³²
Ավետարան Ղուկասի	Անհայտ ³³
Ավետարան Հովհաննեսի	Անհայտ ³⁴
Գործք	Ղուկասի հեղինակը ³⁵

³⁰ Հինգ Ավետարաններ էջ.20

³¹ «Չնայած գոյություն ունի Մատթեոս անունով անհատ և Հիսուսի աշակերտների մեջ տարբեր թղթերում... Մատթեոսի հեղինակը միգուցե անհայտ է»: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր.14, էջ.826

³²«Չնայած Մարկոսի հեղինակը միգուցե անհայտ է...» Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 14, էջ.824

³³«Մուրատոնյան Օրենքը վերաբերվում է Ղուկասին, բժշկին, Պողոսի ուղեկցորդին; Իրենիուսը Ղուկասին պատկերում է որպես Պողոսի Ավետարանի հետևորդ: Էսեբիուսը Ղուկասին համարում է Անթոնենացի բժիշկ, ով Պողոսի հետ էր, որպեսզի Ավետարանին հաղորդի առաքելական հեղինակություն»: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 14, էջ. 827

³⁴«Ըստ ներքին վկայության, Ավետարանը գրել է սիրելի աշակերտը, ում անունը անհայտ է»: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 14, էջ. 828

³⁵ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 14. էջ.830

Հեվհաննես Ա, Բ, Գ

Հովհաննեսի հեղինակ ³⁶

Ջ.Բ. Ֆիլիփսը, Անգլիայի Անգլիկան Եկեղեցու Չիչեսթեր Մայր Տաճարի պատվելի հայրը³⁷, գրառեց հետևյալ նախաբանը Սուրբ Մատթեոսի Ավետարանի իր թարգմանության մեջ. «Վաղ սովորությունները, սովյալ Ավետարանը վերագրում են Մատթեոս Առաքյալին, սակայն այժմ, համարյա բոլոր գիտնականները մերժում են այս տեսակետը: Հեղինակը, ում մենք պայմանականորեն կոչում ենք Մատթեոս, նկարագրվում է առեղծվածային «Q»³⁸ տառով, որը կարող է բանավոր սովորությունների

³⁶ Իբիդ, հատոր 14, էջ. 844

³⁷ Քահանան, ով եկամուտ է ստանում եկեղեցական աղբյուրներից, առանձնապես մայր տաճարից: Օքսֆորդի Առաջադեմ Ուսանողի Բառարան էջ. 973

³⁸ Գոյություն ունեն ավելի քան երկու հարյուր բնորոշ տարբերակներ, որոնք կարելի է գտնել Մատթեոսի և Ղուկասի Ավետարանների մեջ. Մատթեոս 3:7-10 և Ղուկաս 3:7-9; Մատթեոս 18:10-14 և Ղուկաս 15:3-7, առանց որևէ համարժեքի Մարկոսի կամ Հովհաննեսի մեջ: Որպես սովյալ համաձայնության բացատրություն, Գերմանացի գիտնականները հիպոթեզ են կայացրեցին, որ գոյություն ունեւ փաստաթղթի մի փաստաթուղթ, որը նա վերագրել է որպես Քուելլե, գերմաներեն աղբյուր: «Q» տառի հապավումը ավելի ուշ ընդունվեց որպես անուն: Այս տառի գոյությունը որոշ գիտնականներ վիճարկեցին, հիմնվելով, որ ավետարանի ասացվածքները իրականում ավետարան չեն: Նրանք վիճում են, որ գոյություն չունի ավետարանի որևէ հնագույն գուգահեռ, որը ներառում է միայն ասացվածք և այլաբանություններ և Հիսուսի մասին պատմությունների պակաս, առանձնապես ինչը

հավաքածու լինել: Նա ազատորեն կիրառում էր Մարկոսի Ավետարանը, չնայած նա վերակարգավորել էր դեպքերի հերթականությունը և որոշ դեպքերում միննույն պատմությունների համար կիրառել էր տարբեր բառեր»:³⁹ Չորրորդ, Հովհաննեսի Ավետարանը վաղ եկեղեցին համարեց հերետիկ և նրան հայտնի չէ Հովհաննեսի Ջիբիդիի⁴⁰ որդու որևէ պատմությունը: Ըստ շատ գիտնականների դատողության, այն ներկայացրել է աշակերտների «դպրոցը», միգրացե Սիրիայի սահմանում, առաջին դարի վերջին տասնամյակում:⁴¹

վերաբերվում է նրա տանջանքին և մահվանը:Թոմասի Ավետարանի հայտնագործությունը փոփոխեց այդ ամենը: Հինգ Ավետարաններ էջ.12

³⁹ Ավետարանները ժամանակակից անգլերենում:

⁴⁰Մինչ 18-րդ դարը առաջին երեք Ավետարանները կոչվել են Սինոպտիկ Ավետարաններ, որովհետև տեքստերը, միմյանց կողքին, ցուցադրել են Հիսուս Քրիստոսի կյանքի և մահվան նմանատիպ վերաբերմունքը: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 5, էջ. 379

⁴¹ Հինգ Ավետարաններ էջ. 20

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստվածաշնչյան նյութերի վկայությունների անվստահությունը կարելի է նաև գտնել Հին և Նոր Կտակարանների շատ հակասությունների մեջ: Ստորև նշվածները հանդիսանում են միայն մի քանի օրինակներ:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

1. Թագավորաց և Մնացորդաց հատվածների հեղինակները Մարգարե Դավիթի միննույն պատմությունը կապում են Հրեաների մարդահամարի հետ: Ամեն դեպքում Թագավորաց Բ բաժնում այն հայտնում է, որ Մարգարե Դավիթը գործեց ըստ Աստծո հրահանգների, մինչդեռ ըստ Մնացորդաց Ա նա գործում է ըստ Սատանայի հրահանգների:

<p>Թագավորաց Բ 24</p> <p>Համարակալում</p> <p>Եվ կրկին Տիրոջ զայրույթը բորբոքվեց ընդդեմ Իսրայելի և նա ուղրակեց Դավիթին նրանց դեմ ասելու, «Գնա համարակալիր Իսրայելը և Հուդան»:</p>
--

2. Նկարագրելով ժանտախտի տևողությունը, որը մարգարեացրել են Գադին,⁴² Թագավորաց Բ հեղինակը նշում է յոթ տարի, մինչդեռ Մնացորդաց Ա նշում է երեք տարի:

<p>Թագավորաց Բ 24:13</p> <p>Ժանտախտ</p> <p>Այսպիսով Գադը եկավ Դավիթի մոտ և ասաց նրան և ներշնչեց նրան,</p> <p>«Արդյո՞ք յոթ տարի սով է գալու քեզ մոտ, քո երկիր, կամ արդյո՞ք դու հեռանալու ես երեք ամիս մինչ քո թշնամիները, մինչ նրանք հետապնդում են քեզ»:</p>

<p>Հովաքիներ ութ տարեկան էր , երբ նա սկսեց կառավարել և նա կառավարեց երեք ամիս և տաս օր Երուսաղեմում և նա արեց այն, ինչը չարիք էր Տիրոջ առջև:</p>	<p>Հովաքիներ տասնութ տարեկան էր, երբ նա սկսեց կառավարել և նա կառավարեց Երուսաղեմում երեք ամիս: Եվ նրա մոր անունը Նեհուսթա էր, Երուսաղեմի Էլնաթանի դուստրը:</p>
--	--

4. Թագավորաց Բ հեղինակը նկարագրում է Մարգարե Դավիթի հետ մարտի Սիրիացի զոհերի թիվը յոթ հարյուր, մինչդեռ Մնացորդաց Ա տալիս է նրանց քանակը յոթ հազար:

<p>Թագավորաց Բ 10:18</p> <p>Զոհեր</p> <p>Եվ Սիրիացիները փախան Իսրայելից; և Դավիթը կոտորեց յոթ հարյուր Սիրիական կառքեր և չորս հազար ձիավոր և սպանեց Շոբաօհին, իրենց բազմության զորավարին, ով զոհվեց այնտեղ:</p>	<p>Մնացորդաց Ա 19:18</p> <p>Զոհեր</p> <p>Սակայն Սիրիացիները փախան Իսրայելից ; և Դավիթը կոտորեց յոթ հազար մարդ, ովքեր մարտնչում էին կառքերով և քառասուն հազար հետևակ և սպանեց Շոբաօհին, բազմության զորավարին:</p>
--	--

Չնայած ոմանք կարող են ասել, որ լրացումը կամ «1» կամ զրոյի հեռացումը էական չէ , քանի որ այն այստեղ հանդիսանում է միայն տպագրական սխալ, որը էական չէ,

որովհետև Հրեաները իրենց թվերը ասում են տառերով և թվականներ չեն կիրառում:

Նմանատիպ հակասությունները չեն կարող ընդունելի լինել որպես աստվածային հայտնության տեքստի մաս: Ավելին, նրանք ապացուցում են մարդ հեղինակների թերությունները և հետագայում ապացուցում են, որ Հին Կտակարանի տեքստերը աստվածային չեն:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Նոր Կտակարանի մեջ կարելի է գտնել նմանատիպ շատ հակասություններ: Հետևյալներից են.

1. Կտակարանը առաջարկում է տարբերակներ, ովքեր կրել են խաչը, որի վրա ենթադրաբար խաչվել է Հիսուսը: Ըստ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի նա Սիմոն Սիրենն էր և ըստ Հովհաննեսի, Հիսուսը:

<p>Ղուկաս 23:26⁴³</p> <p>Խաչը</p> <p>Երբ նրանք առաջնորդեցին նրան, նրանք մի տղամարդ բռնեցին, Սիմոն Սիրենին, ով գալիս էր գավառից և նրանք դրեցին խաչը նրա վրա և ստիպեցին նրան կրել այն...</p>	<p>Հովհաննես 19:16</p> <p>Խաչը</p> <p>Այնուհետ, նա, Պիղատոսը տվեց նրան, նրանց խաչելության: Այսպիսով նրանք վերցրեցին Հիսուսին և կրելով խաչը տարան Հիսուսին; և ինքը կրելով խաչը, նա գնաց այսպես կոչված Գլխատեղ...</p>
---	---

2. Հիսուսի «խաչելությունից» հետո, Կտակարանը հակասում է խոսելով այն մարդկանց մասին, ովքեր այցելել են նրա շիրիմը, երբ տեղի ունեցավ այցը, ինչպես նաև շիրիմի վիճակը, երբ այցելեցին այն: Մատթեոսի, Ղուկասի և Հովհաննեսի Ավետարանները հայտնում են, որ այցը տեղի ունեցավ մինչ արևածագը, մինչդեռ Մարկոսի

⁴³ Տես նույնպես Մատթեոս 27:32 և Մարկոս 15:21

Ավետարանը հայտնում է, որ այն արևածագից հետո էր: Մյուս երեք Ավետարաններում, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի, կանայք գտան շիրիմի քարի դուռը շրջված, սակայն Մատթեոսի Ավետարանի մեջ շիրիմը փակված էր մինչ հրեշտակը հայտնվեց նրանց առջև և շրջեց այն :

<p>Մարկոս 16:1-2</p> <p>Այցը</p> <p>Եվ երբ անցավ սաբբաթը, Մարիամ Մագդաղենացին և Մարիամը, Հովհաննեսի մայրը և Սալոմեն բերեցին անուշաբույր, այնպես, որ նրանք ի վիճակի լինեն գնալ և օծել նրան: 2 Եվ շատ վաղ, շաբաթվա առաջին օրը նրանք գնացին շիրիմ, երբ արևը ծագել էր :</p>	<p>Հովհաննես 20:1⁴⁴</p> <p>Այցը</p> <p>Այժմ, շաբաթվա առաջին օրը Մարիամ Մագդաղենացին վաղ եկավ շիրիմի մոտ , երբ դեռ խավար էր և տեսավ, որ քարը շիրիմից հեռու էր:</p>	<p>Մատթեոս 28:1-2</p> <p>Այցը</p> <p>Այժմ սաբբաթից հետո, արշալույսի մոտ շաբաթվա առաջին օրը, Մարիամ Մագդաղենացին գնաց տեսնելու շիրիմը: 2 Եվ նկատեց, որ մեծ երկրաշարժ էր; քանի որ Տիրոջ հրեշտակը իջել էր երկնքից և եկել և շրջել էր քարը և նստել էր այնտեղ:</p>
---	--	--

⁴⁴ Տես նույնպես, Ղուկաս 24:1-2

--	--	--

3. Նոր Կտակարանը տարբեր տարբերակներ է տալիս, որը կապված է Հուդա Իսկարիացու հետ և այն գումարի, որը նա ստացել է դավաճանելով Հիսուսին: Մատթեոսի Ավետարանի մեջ նա ինքն իրեն կախեց, մինչդեռ Գործքի մեջ նա ընկավ դաշտում և այնտեղ կնքեց մահկանացուն:

<p>Մատթեոս 27:3-6</p> <p>Հուդայի ճակատագիրը</p> <p>Երբ Հուդան, նրա դավաճանը, տեսավ, որ Հիսուսին դատապարտել են, նա գղջաց և վերադարձրեց արծաթե երեսուն կտորները դեկավար քահանաներին և մեծերին, ... Եվ, զգելով արծաթի կտորները տաճարի մեջ, նա հեռացավ; և նա հեռացավ և կախեց իրեն:</p>	<p>Գործք 1:18</p> <p>Հուդայի ճակատագիրը</p> <p>Այժմ այս տղամարդը գնեց մի դաշտ իր թուլության պարզևի միջոցով; և գլխիվայր ընկնելով նա մեջտեղից կես եղավ և նրա փորոտիքը թափվեց:</p>
--	---

4. Երբ Հիսուսի ծագումնաբանությունը Դավիթից Մատթեոսի 1:6-16, համեմատելի է Ղուկասի 3:23-31 –ի հետ, ապա գոյություն ունեն հսկայական հակասություններ: Առաջին հերթին, Մատթեոսի մեջ Հիսուսը ունի 26 ծնող իր և Դավիթի միջև, սակայն Ղուկասի մեջ նա ունի 41: Երկրորդ, երկու ցուցակների մեջ գտնվող անունները կտրականապես տարբեր են Դավթից հետո և միայն երկու անուններ են նույնը. Հովսեփ և Զորոբաբել:

Երկու ցուցակներն էլ սկսվում են Հովսեփով, բավականին տարօրինակ, ինչպես Հիսուսի հայր, սակայն Մատթեոսի մեջ հեղինակը արձանագրում է Հակոբին որպես Հիսուսի հորական պապի, մինչդեռ Ղուկասի մեջ նա Հեյլին էր: Եթե որևէ մեկը պետք է ընդունի այդ ցուցակներից մեկի առաջարկը, ապա այն կհանդիսանա Մարիամի ծագումնաբանությունը, անհնար է որ լինեն տարբերություններ, իրենց ընդհանուր նախահոր Դավթի համար: Երկու ցուցակները կրկին հանդիպում են Աբրահամին և Դավթի և Աբրահամի միջև անունների մեծամասնությունը նույնն են: Ամեն դեպքում, Մատթեոսի ցուցակի մեջ, Հեզրոնի որդու անունը Ռամ է, Ամմինադաբի հայրը, մինչդեռ Ղուկասի ցուցակի մեջ, Հեզրոնի որդու անունը Արնի է, ում որդու անունը Ադմին է, Ամմինադաբի հայրը:⁴⁵ Ուստի, ըստ Մատթեոսի ցուցակի Դավիթի և Աբրահամի միջև գոյություն ունեն 12 նախահայր և Ղուկասի ցուցակում 13:

Ավետարանների այս և նմանատիպ այլ տարբերությունները հանդիսանում են ակնհայտ սխալներ, որոնք, ինչպես աստվածային հայտնված գրքեր, կասկածի ստվերներ են գցում իրենց հեղինակության վրա: Ուստի, այսօր Քրիստոնյա գիտնականների մեծամասնությունը, Հին և Նոր կտակարանները դիտում են որպես մարդու արարված, որոնք ըստ նրանց հավատքի, ոգեշնչել է Աստված: Ամեն դեպքում այն հայտարարությունը, որ

⁴⁵ Նույնպես, ըստ Մատթեոսի ցուցակի, Նահշոնի որդու անունը Սողոմոն է, մինչդեռ ըստ Ղուկասի, Նահշոնի որդու անունը Սալա է:

դրանք ոգեշնչել է Աստվածը, վիճելի են, քանի որ այն ենթադրում է, որ Աստված ոգեշնչել է հեղինակներին գրել սխալներ և հակասություններ Իր գրերի մեջ:

Հաստատելով, որ Հին և Նոր Կտակարանների վավերականությունը վիճելի է, կարելի է հաստատորեն ասել, որ Աստվածաշունչը ինքն իրեն չի կարելի կիրառել որպես վավերական վկայակոչված աղբյուր, որպեսզի հաստատի Հիսուսի ով լինելը, այլ ոչ թե նրա ուղերձի բովանդակությունը:

ՂՈՒՐԱՆ

Մյուս կողմից, ըստ Մահմեդականների հավատքի Ղուրանը հանդիսանում է Աստծո խոսք, որը հայտնվել է Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն), որը սկզբից մինչև վերջ գրառվել և հիշատակվել է Մարգարեի կյանքի ընթացքում:

Նրա մահից հետո մեկ տարվա ընթացքում, ներկայացվեց առաջին տիպական գրավոր տեքստը:⁴⁶ Եվ, նրա մահից 14 տարի անց, հեղինակային կրկնօրինակները Օսմանյան Տեքստերը, որոնք պատրաստված էին տիպական ձեռագրից⁴⁷ ուղարկվեցին Մահմեդական պետության մայրաքաղաքները և ոչ վավերական կրկնօրինակները ոչնչացվեցին:⁴⁸

Մինչ 632 թվականի Մարգարեի մահը, յուրաքանչյուր հաջողակ սերնդի ավելացող քանակ, հիշատակել է Ղուրանի ամբողջական տեքստը սկզբից մինչև վերջ: Այսօր, ամբողջ աշխարհում գոյություն ունեն տասնյակ հազարավոր մարդիկ, ովքեր ամեն տարի, Ռամադան ամսվա և որոշակի դեպքերի ընթացքում հիշելով ասում են ամբողջ տեքստը:

Առաջատար արևելագետներից Քենեթ Գրեգը, ասաց հետևյալը, որը վերաբերվում է Ղուրանական տեքստը հիշելուն և ներկայացնելուն. «Ղուրանական

⁴⁶ Իսլամի Համառոտ Հանրագիտարան, էջ. 278

⁴⁷ Հնագույն տեքստերի գրավոր գրքերը, հոգնակիորեն ձեռագրեր

⁴⁸ Իսլամի Հակիրճ Հանրագիտարան, էջ. 279; Տես նույնպես Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 22. էջ. 8

ընթերցանության տվյալ երևույթը նշանակում է, որ տեքստերը դարեր են անցել առանց անկոտրուն , ապրող նվիրվածության արդյունքի: Ուստի, այն չի կարող լինել հնոտիկ, ոչ էլ հեռավոր անցյալի պատմական փաստաթուղթ»⁴⁹ Մեկ այլ արևելագետ գիտնական Ուիլյամ Գրահամը գրառեց. «Անհաշիվ միլիոնավոր Մահմեդականների համար ավելի քան տասնչորս դար, Իսլամական պատմության, «գիրը» ալ-քիթաբը, դարձել է ուսուցանված, ընթերցված և բանավոր կրկնված և հիշատակված փոխանցված գիրք: Գրավոր Ղուրանը կարող է 'վերանորոգել' տեսանելի հեղինակային տեքստը Աստվածային Խոսքի պատմությանը անհայտ ձևով, սակայն Ղուրանական Գրքի հեղինակությունը կարելի գիտակցել միայն լիարժեք և կատարյալ և ճիշտ ընթերցանության միջոցով»:⁵⁰ Մինչդեռ Ջոն Բուրթոնը հայտարարեց. «Մերնդից սերունդ Ղուրանի փոխանցման մեթոդը օգնում են երիտասարդներին հիշել իրենց մեծերի բանավոր սովորույթները, որը և մեղմացնում է որևէ բան, սկզբից վատագույն վտանգները վստահելու, ելնելով բացառապես գրավոր գրառումներից...»⁵¹ Ղուրանական հավաքածուի հատորային ավարտին, Բուրթոնը հայտնեց, որ այսօր մատչելի Ղուրանի տեքստը «այն տեքստն է, որը եկել է մեզ այն ձևով, ինչպես այն ձևավորվել և խրատուսվել

⁴⁹ Ղուրանի Միտքը էջ.26

⁵⁰ Խոսքի Ներքո էջ.80

⁵¹ Պատման Ներածությունը էջ. 27

Է Մարգարեի կողմից... Ինչ այսօր մենք ունենք մեր ձեռքերում Մուհամմեդի⁵² մուսհաֆն ⁵³ է»:

⁵² Արաբերեն տերմինը սովորաբար վերաբերվում Ղուրանի տեքստին:

⁵³ Ղուրանի Հավաքածու էջ.239-40

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերլուծության միևնույն սկզբունքները, որոնք վերաբերվում են Աստվածաշնչյան գիտնականների ձեռագրերին և որը բացահայտում է հոսանքները և փոփոխությունները, վերաբերվում են նաև Ղուրանական ձեռագրերին, որոնք հավաքվել են ամբողջ աշխարհից: Հնագույն ձեռագրերը, որոնք գտել են Վաշինգտոնի Կոնգրեսի Գրադարանում, Դուբլինի Չեսթեր Բիաթի թանգարանում, Լոնդոնի Թանգարանում, ինչպես նաև Տաշքենդի Թանգարաններում, Թուրքիայում և Եգիպտոսում, Իսլամական պատմության բոլոր ժամանակաշրջաններից, ենթարկվել են համեմատության: Նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքը հաստատում է, որ տեքստի մեջ գոյություն չունի որևէ փոփոխություն իր բնօրինակ գրվածքից: Օրինակ, Գերմանիայի Սյունխենի Համալսարանի «Ղուրանի Հաստատությունը», հավաքեց և բաժանեց Ղուրանի ավելի քան 42,000 ամբողջական կամ ոչ ամբողջական կրկնօրինակներ: Հիսուն տարվա ուսումնասիրություններից հետո, նրանք հաղորդեցին, որ տարբեր կրկնօրինակների միջև գոյություն ունեցող տարբերությունների ժամկետների ընթացքում, գոյություն չունի ոչ մի տարբերակ, բացառությամբ դպիրների տարածված սխալների, որոնք կարող են հեշտորեն հաստատել: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի Ամերիկյան ռումբերը ավիրեցին հաստատությունը:⁵⁴

⁵⁴ Մուհամմեդ Ռասուլլուլլահ էջ.179

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՄԵՋ

Ղուրանը պահպանեց իր բնօրինակ Արաբերեն լեզուն և իր Աս-Նիսաա 4:82 գլխի մեջ , իր ընթերցողին մարտահրավեր է նետում գտնելու որևէ սխալ, եթե նրանք չեն հավատում, որ այն իրոք Աստծուց է:

أَفَلَا يَتَذَكَّرُونَ الْقُرْآنَ وَلَوْ كَانِ مِنْ عِنْدِ غَيْرِ اللَّهِ لَوَجَدُوا فِيهِ
اِخْتِلَافًا كَثِيرًا

«Արդյո՞ք նրանք ուշադիր կլինեն Ղուրանին: Եթե այն լիներ մեկ այլ ոգուց, ոչ թե Ալլահից, նրանք կգտնեին այնտեղ շատ հակասություններ»:

Մի քանի «հայտնի հակասությունները» որոնք սովորաբար նշում են նրանք, ովքեր փորձում են Ղուրանը նվազեցնել Աստվածաշնչի աստիճանի, կարելի է հեշտությամբ բացատրել: Օրինակ, «առաջին հավատացյալը» հետևյալ երկու տարբերակների մեջ.

<p>Գլուխ ալ-Անամ (6:14)</p> <p>«Ասա, (օվ Մուհամմեդ). «Արդյո՞ք ես պետք է որդեգրեմ ինչպես իմ տեր որևէ այլ մեկին, քան Ալլահն է, երկինքների և երկրի Արարիչը, չնայած Նա է, ով սնում է մեզ, սակայն չի սնվում»:</p>	<p>Գլուխ ալ-Աարաաֆ (7:143)</p> <p>«...Սակայն, երբ նրա Տերը հայտնվեց լեռանը, այն վերածվեց փոշու և Մովսեսը ընկավ անգիտակից: Երբ նա գիտակցության եկավ, նա ասաց. «Փառք լինի Քեզ, Ես շրջվում եմ քեզ ապաշխարհությամբ և ես առաջինն եմ</p>
--	--

<p>Ասա. «Իրոք, ինձ պատվիրել են լինել առաջինը նրանցից, ովքեր իրենց ենթարկել է Ալլահին և չլինել կռապաշտներից»:</p>	<p>հավատացյալներից»:</p>
--	--------------------------

Առաջին տարբերակը վերաբերվում է Մարգարե Մուհամմեդին, ում ասել են հաղորդել իր ժամանակաշրջանի կռապաշտներին, որ նա երբեք չի կարող ընդունել նրանց կռապաշտությունը և կլինի իր ժամանակաշրջանի ընթացքում նրանցից առաջինը, ով հնազանդվում է Ալլահին: Երկրորդ տարբերակի մեջ, Մարգարե Մովսեսը իրեն հայտարարեց իր ժամանակաշրջանում առաջինը, ով հնազանդվել է Ալլահին գիտակցելով, որ հնարավոր չէ տեսնել Նրան: Յուրաքանչյուր մարգարե իր ժամանակաշրջանի ընթացքում առաջինն էր, ով հնազանդվել էր Ալլահին:

Նմանապես, «օր Աստծո հետ», որը նշվել է հետևյալ երկու տարբերակների մեջ.

<p>Գլուխ աս-Սաջդահ (32:5)</p> <p>«Նա կարգավորեց յուրաքանչյուր գործ երկինքներից երկիր, այնուհետ այն անցավ Նրան, մեկ օր, որը համահավասար է հազար տարվա, ըստ ձեր</p>	<p>Գլուխ ալ-Միրասաջ (70:4)</p> <p>«Հրեշտակները և Հոգին բարձրացան Նրա մոտ մեկ օր, որը համահավասար է հիսուն հազար տարվա»:</p>
---	---

հաշվարկի»:	
------------	--

Երկու տարբերակները վերաբերվում են երկու բոլորովին տարբեր իրադարձությունների: Առաջինը վերաբերվում է ճակատագրին, որը ուղարկել է և ետ է հաղորդել այն օրը, որը կառավարում է մարդկային կյանքի հազար տարին:⁵⁵ Երկրորդը վերաբերվում է աշխարհից հրեշտակների համբարձմանը երկինքների ամենավերին հատվածը, որը նրանց համար համահավասար է 50.000 մարդկային տարիների:⁵⁶ Ժամանակը չի կառավարում Ալլահին: Նա արարել է ժամանակը և այն դարձրել է համապատասխան արարածներին, որպեսզի կառավարի: Ուստի, ըստ ժամանակակից գիտնականների հաշվարկի, Մարսի մեկ տարին համահավասար է 687 երկրային օրվա, մինչդեռ Ուրանի մեկ տարին համահավասար է 84 երկրային տարվա:⁵⁷

Ղուրանական տեքստը նշմարելիորեն հաստատուն է տվյալ մտքին և ներկայացմանը: Ղուրանի լավագույն արևելագիտական թարգմանության նախաբանում, թարգմանիչը, Արթուր Ջոն Արբերրին գրում է. «Գոյություն ունեն միանման թեմաների պահեստներ, որոնք անցնում են ամբողջ Ղուրանի միջով; յուրաքանչյուր Սուրան⁵⁸ դրանցից զարգացնում կամ ներկայացնում է ⁵⁹ մեկ կամ ավելին- հաճախ շատ: Կիրառելով երաշտության լեզուն,

⁵⁵ Տաֆսիիր ալ-Քուրթուբիի, հատոր 8, էջ.5169-70

⁵⁶ Ֆաթ-հուլ-Քադիիր, հատոր 4, էջ.349

⁵⁷ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան, հատոր 27, էջ.551 և 571

⁵⁸ Ղուրանական գլուխ

⁵⁹ Նշում է անգիտակից, կամ ամենից վեր

յուրաքանչյուր Սուրան ռապսոդիա է, որը հորինվել է ամբողջականորեն կամ մասնակի հիմնական մտքով,⁶⁰ նմանությունը ամրապնդվել է նրբագեղ տարբեր ռիթմիկ շարադրանքի հոսանքով»:⁶¹

Ապացուցվել է, որ Ղուրանական տեքստի գիտական մեջբերումները հաստատուն և անբացատրելի ճշգրիտ են: «Հոգեբանական և էմբրիոնաբանական տվյալները Ղուրանի մեջ» դասախոսությունում, որը 1976 թվականին Բժշկական Ֆրանսիական Համալսարանում տվել է, Դոկ. Մաուրիս Բուքելյը ասաց. «Գոյություն չունի ոչ մի մարդկային աշխատանք, որը պարունակում է իր ժամանակահատվածում գիտական մակարդակից վեր հայտարարություններ, ինչպես Ղուրանը: Գիտական կարծիքները ի համեմատություն Ղուրանի պարունակության, ժամանակակից գիտելիքների արդյունք են»:⁶²

Խոսելով Ղուրանի հեղինակության մասին, պրոֆեսոր Ռեյնոլդ Ա. Նիքոլսոնը ասաց. «Ղուրանի մեջ մենք ունենք եզակի և անմրցունակ հեղինակության նյութեր, որոնք հասնում են Իսլամի ծագման և վաղ զարգացման ժամանակահատվածը, նմանատիպ նյութերը գոյություն չունեն Բուդդայականության կամ Քրիստոնեության կամ այլ հնագույն կրոնների մեջ»:⁶³

⁶⁰ Կրկնվող բնորոշումներ

⁶¹ Թարգմանված Ղուրանը էջ.28

⁶² Ղուրանը և Ժամանակակից Գիտությունը էջ.6

⁶³ Արաբների Գրական Պատմությունը էջ.143

Ուստի, միայն Ղուրանն է ճշգրիտ միջոցներ ներկայացնում, սահմանելով Հիսուսի և նրա ուղերձի ով կամ ինչ լինելը: Ավելին, Ղուրանը կարելի է կիրառել որոշելու, Աստվածաշնչի մեջ գոյություն ունեցող Աստծո հայտնված խոսքերի աստիճանը:

Ղուրանի մեջ, որպես իրենց հավատքի մաս, Աստված պատվիրում է հավատացյալներին, ընդունել աստվածային խոսքը, որը հայտնվել է Մարգարե Մովսեսին, հայտնի որպես Թորա; Մարգարե Դավիթին բնօրինակ Սաղմոսներին և Հիսուսին բնօրինակ Ավետարանին: Բոլոր Մահմեդականները պետք է հավատան բոլոր հայտնված գրերին: Ամեն դեպքում, ինչպես հայտնել է Ղուրանը, բոլոր գրերը, որոնք նախորդել են Ղուրանին, չեն մնացել իրենց բնօրինակ վիճակով: Մարդիկ հատվածները փոփոխել են, համապատասխանացնելով իրենց իսկ ցանկություններին:

فَوَيْلٌ لِلَّذِينَ يَكْتُوبُونَ الْكِتَابَ بِأَيْدِيهِمْ ثُمَّ يَقُولُونَ هَذَا مِنْ عِنْدِ اللَّهِ
لَيْشْتَرُوا بِهِ ثَمَنًا قَلِيلًا فَوَيْلٌ لَهُمْ مِمَّا كَتَبَتْ أَيْدِيهِمْ وَوَيْلٌ لَهُمْ مِمَّا
يَكْسِبُونَ

«Անեծք նրանց, ովքեր գրում են գրեր իրենց իսկ ձեռքերով և այնուհետ ասում են. «Մա Ալլահից է», ստանալով դրա հետ աշխարհիկ շահ և էժան արժեք: Անեծք նրանց, ինչ նրանց ձեռքերն են գրում և անեծք նրան ,թե ինչ են նրանք վաստակում անելով դա»: (Ղուրան 2:79)

Ավելին, Հին Կտակարանի, Երեմիա 8:8-ի մեջ են մեջբերում Աստծոն ասելով. «Ինչպե՞ս եք դուք կարող ասել, «Մենք

իմաստուն ենք և օրենքը մեզ հետ է»: Սակայն, զգուշացեք, դպիրների կեղծ գրիչը այն ստի է վերածել»:⁶⁴

⁶⁴ Վերանայված Տիպական Տարբերակ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԻՍՈՒՍԸ ԱՆՀԱՏ

Ինչպես ցույց է տալիս նախորդ գլուխը, Աստվածաշնչյան գրերը, և Նոր և հին Կտակարանները, անվստահելի աղբյուրներ են և ուստի, չեն կարող կիրառվել որպես ճշմարտության գիտակցության վավերականություն այն մարդու մասին, ում անունն էր Հիսուս Քրիստոս կամ նրա ուղերձի և առաքելության մասին: Ամեն դեպքում, այս գրերի ուշադիր ուսումնասիրությունը Ղուրանական տարբերակների ներքո, կբացահայտնի Հիսուսի մասին որոշակի ճմարտություններ, որոնք պահպանել է Աստվածաշունչը:

ՄԱՐԳԱՐԵՆ

Ամբողջ Ղուրանի մեջ, Հիսուսը ճանաչվում է հիմնականում որպես Աստծո մարգարե: Աս- Սաֆֆ գլխի 61:6-ի մեջ Աստված Հիսուսին մեջբերում է հետևյալ կերպ.

وَإِذْ قَالَ عِيسَى ابْنُ مَرْيَمَ يَا بَنِي إِسْرَائِيلَ إِنِّي رَسُولُ اللَّهِ إِلَيْكُمْ مُصَدِّقًا لِمَا بَيْنَ يَدَيَّ مِنَ التَّوْرَةِ وَمُبَشِّرًا بِرَسُولٍ يَأْتِي مِنْ بَعْدِي اسْمُهُ أَحْمَدُ فَلَمَّا جَاءَهُمْ بِالْبَيِّنَاتِ قَالُوا هَذَا سِحْرٌ مُّبِينٌ

«Եվ հիշեք, երբ Հիսուսը, Մարիամի որդին ասաց. «Օվ Իսրայելի զավակներ, ես Ալլահի Մարգարեն եմ, ում ուղարկել են ձեզ, որպեսզի հաստատեմ Թորան, որը նախորդել է ինձ»:

Նոր Կտակարանի մեջ գոյություն ունեն շատ տարբերակներ, որոնք աջակցում են Հիսուսի

մարգարեությանը: Ահա Մատթեոս 21:11, ըստ գրառման, նրա ժամանակարջանի մարդիկ Հիսուսին վերաբերվում էին որպես մարգարեի. «Եվ ամբոխները ասացին, «Մա մարգարե Հիսուսն է Նազովրեցի Գալիլեայից»»: Մարկոս 6:4 հայտնում է, որ Հիսուսը իրեն վերաբերվում է, որպես մարգարե. «Եվ Հիսուսը ասաց նրանց, «Մարգարեն առանց պատվի չէ, բացառությամբ իր իսկ երկրում և իր իսկ ազգականների և իր իսկ տան մեջ»»: Հետևյալ տարբերակների մեջ Հիսուսին վերաբերվում են որպես մարգարե, ում ուղարկել են: Մատթեոս 10:40 Հիսուսը կարծեցյալ ասաց. «Նա, որ ընդունեց ձեզ, ընդունեց ինձ և նա, որ ընդունեց ինձ ընդունեց նրան, որ ուղարկեց ինձ»: Հովհաննես 17:3 նույնպես մեջբերեց Հիսուսին ասելով. «Եվ սա է կյանքը հավերժական, որ նրանք ի վիճակի լինեն գիտակցել քեզ, միակ, ճշմարիտ Աստծուն և Հիսուս Քրիստոսին, ում դուք ուղարկել եք»:⁶⁵

⁶⁵ Տես նույնպես, Հովհաննես 4:34, 5:30,7:16 և 28, 11:42, 13:16, 14:24

ՄԱՐԴ

Ղուրանական հայտնությունը ոչ միայն հաստատում է Հիսուսի մարգարեությունը, այլ պարզորեն ժխտում է Հիսուսի աստվածայնությունը: Ալ-Մաիդահ 5:75 գլխում, Աստված նշում է, որ Հիսուսը սնվում էր, որը հանդիսանում է մարդկային արարք, որը ակնհայտորեն անհամապատասխան է Աստծոն:

مَا الْمَسِيحُ ابْنُ مَرْيَمَ إِلَّا رَسُولٌ قَدْ خَلَتْ مِنْ قَبْلِهِ الرُّسُلُ وَأُمُّهُ
صِدِّيقَةٌ كَانَا يَأْكُلَانِ الطَّعَامَ انظُرْ كَيْفَ نُبَيِّنُ لَهُمُ الْآيَاتِ تَمَّ انظُرْ
أَنَّى يُؤْفَكُونَ

«Մեսսիան, Մարիամի Որդին, ոչ ավելին քան մարգարե էր և շատ մարգարեներ նախորդել են նրան: Նրա մայրը չափազանց ճշմարիտ էր և նրանք երկուսն էլ սնվում էին: Տեսեք, թե ինչպես եմ ես նշանները պարզ դարձրել նրանց համար, մինչդեռ տեսեք, թե ինչպես են նրանք մոլորվել»:

Նոր Կտակարանի մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ, որոնք նույնպես ժխտում են Հիսուսի աստվածայնությունը:

Օրինակ, Մատթեոս 19:17, Հիսուսը պատասխանեց նրան, ով դիմեց որպես «Օվ բարի տեր», ասելով. «Ինչու՞ ես ինձ կոչում բարի: Գոյություն չունի ոչ ոք բացառությամբ մեկի, որը Աստվածն է»: Եթե նա ժխտեց, որ նրան կոչեն «բարի»⁶⁶

⁶⁶ Այստեղ հիսուսը ժխտում է «կատարյալ բարի» լինելը, որովհետև կատարելությունը պատկանում է միայն Աստծուն: Նա «բարի» էր, սակայն լինելով «Մարդու Որդի» Մատթեոս 19:29-

և հայտնեց, որ միայն Աստվածն է ճշմարիտ բարին, նա ակնհայտորեն ենթադրում է, որ նա Աստված չէ:

Հովհաննես 14:28, Հիսուսը ասում է. «Հայրը ավելի հզոր է, քան ես»: Հայտնելով, որ «Հայրը» ավելի հզոր է, քան ինքը, Հիսուսը իրեն տարբերակում է Աստծուց: Նույնպես, Հովհաննես 20:17, Հիսուսը ասում է Մարիամ Մագթաղենացուն ասել իր հետևորդներին. «Ես համբարձվել եմ իմ Հոր և ձեր Հոր մոտ և իմ Աստծո և ձեր Աստծո»: Հիսուսի Աստծո վկայակոչումը որպես «իմ Հայր և ձեր Հայր» հետագայում շեշտում է, Աստծո և նրա միջև գոյություն ունեցող տարբերությունը: Ավելին, Աստծոն վերաբերվելով ինչպես «իր Աստված» նա հնարավորություն չի տալիս որևէ մեկին խելամտորեն հայտնել, որ նա Աստված է:

Նույնիսկ Պողոսի որոշ գրերում, որոնք Եկեղեցին սուրբ է ընդունել, Հիսուսին վերաբերվում են որպես «մարդու», Աստծուց որոշակի և տարբեր: Տիմոթեոս Ա, 2:5 Պողոսը գրում է. «Քանի որ գոյություն ունի մեկ Աստված և մեկ միջնորդ Աստծո և մարդու միջև, Հիսուս Քրիստոս մարդը»:

Նույնպես, Ղուրանի մեջ գոյություն ունեն տարբերակներ, որոնք հաստատում են Մարգարե Մուհամմեդի մարդկայնությունը, որպեսզի նրա հետևորդներին կանխեն բարձրացնել նրան աստվածային կամ կիսաստվածային կարգավիճակի, ինչպես արել են Մարգարե Հիսուսին: Օրինակ, Ալ-Քահֆ (18:110) գլխում, Ալլահը հրահանգում է

ինչպես նա սիրում էր իրենց կոչել- նա ի վիճակի էր սխալ գործելու:

Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն), իր ուղերձը տեղեկացնել բոլոր նրանց, ովքեր լսում են:

قُلْ إِنَّمَا أَنَا بَشَرٌ مِّثْلُكُمْ يُوحَىٰ إِلَيَّ أَنَّمَا إِلَهُكُمْ إِلَهٌ وَاحِدٌ فَمَنْ كَانَ يَرْجُوا لِقَاءَ رَبِّهِ فَلْيَعْمَلْ عَمَلًا صَالِحًا وَلَا يُشْرِكْ بِعِبَادَةِ رَبِّهِ أَحَدًا

«Ասա. «Իրոք, ես միակ մարդն եմ ձեզ նման, ում այն հայտնվել է, որ ձեր Աստված միայն մեկ Աստվածն է»»:

Ալ-Արաաֆ 7:187 գլխի մեջ նույնպես Ալլահը ուղղորդում է Մարգարե Մուհամմեդին (Խ.Ա.Ո.Ն) հաստատել, որ Դատաստանի ժամանակը հայտնի է միայն Աստծոն:

يَسْأَلُونَكَ عَنِ السَّاعَةِ أَيَّانَ مُرْسَاهَا قُلْ إِنَّمَا عِلْمُهَا عِنْدَ رَبِّي لَا يُجَلِّئُهَا لِوَفَّتِهَا إِلَّا هُوَ تَقَلَّتْ فِي السَّمَاوَاتِ وَالْأَرْضِ لَا تَأْتِيكُمُ إِلَّا بَغْتَةً يَسْأَلُونَكَ كَأَنَّكَ حَفِيٌّ عَنْهَا قُلْ إِنَّمَا عِلْمُهَا عِنْدَ اللَّهِ وَلَكِنَّ أَكْثَرَ النَّاسِ لَا يَعْلَمُونَ

«Նրանք քեզ հարցրեցին Վերջին Ժամի մասին. «Ե՞րբ է լինելու նշանակված ժամանակը»: Ասա. «Դրա գիտությունը իմ Տիրոջ հետ է: Ոչ ոք չի կարող բացահայտել դրա ժամանակը, բացառությամբ Նրա»»:

Ըստ Մարկոս 13:31-32 Կտակարանի, Հիսուսը նույնպես հաղորդել է, որ նրան ժխտել են այս աշխարհի վերջին ժամվա տեղեկությունը, ասելով. «Երկինքը և երկիրը կանցնեն, սակայն իմ խոսքը չի անցնի. այդ օրվա կամ ժամի մասին ոչ ոք տեղյակ չէ, ոչ էլ հրեշտակները երկնքում ոչ էլ Որդին կամ Հայրը»: Աստծո ածականներից մեկը ամենագետ, ամենի գիտակն է: Ուստի, նրա Դատաստանի Օրվա գիտության մերժումը նույնպես աստվածայնության

մերժում է, քանի որ ով տեղյակ չէ վերջին ժամվա ժամանակի մասին, հնարավորություն չունի լինել Աստված
 .⁶⁷

⁶⁷ Պետք է նշել, որ անկախ Ղուրանական զգուշացման և Մարգարե Մուհամմեդի այլ հայտարարությունների, որոշ մահմեդականներ բարձրացրել են նրան կիսա-աստվածային կարգավիճակի, ուղղելով իրենց աղոթքները նրան, կամ նրա միջնորդության:

ԱՆԲԻԾ ԳԱՂԱՓԱՐ

Ղուրանը հաստատում է Հիսուսի կուսական ծննդի Աստվածաշնչյան պատմությունը: Ամեն դեպքում, ըստ Ղուրանի, որը կապված է Հիսուսի ծննդյան հետ, Մարիամը ամուրի կույս էր, ում մայրը իր կյանքը նվիրել էր Աստծո երկրպագությանը: Մինչ նա երկրպագում էր կրոնական մեկուսարանում, հրեշտակները եկան և նրան տեղեկացրեցին իր վերահաս հղիության մասին:

إِذْ قَالَتِ الْمَلَائِكَةُ يَا مَرْيَمُ إِنَّ اللَّهَ يُبَشِّرُكِ بِكَلِمَةٍ مِنْهُ اسْمُهُ الْمَسِيحُ
عِيسَى ابْنُ مَرْيَمَ وَجِيهًا فِي الدُّنْيَا وَالْآخِرَةِ وَمِنَ الْمُقَرَّبِينَ

«Երբ հրեշտակները ասացին. «Օվ Մարիամ, իրոք, Ալլահը քեզ ավետիս է տվել Նրա Խոսքի, ում անունը կլինի Մեսսիա, Հիսուս, Մարիամի որդի: Նա պատվելի կլինի այս աշխարհում և հաջորդ և կլինի նրանցից, ովքեր մերձ են Ալլահին»»: (Ղուրան 3:45)

قَالَتْ رَبِّ أُنَى يَكُونُ لِي وَلَدٌ وَلَمْ يَمَسِّنِي بَشَرٌ قَالَ كَذَلِكَ اللَّهُ
يَخْلُقُ مَا يَشَاءُ إِذَا قَضَىٰ أَمْرًا فَإِنَّمَا يَقُولُ لَهُ كُنْ فَيَكُونُ

«Նա ասաց. «Օվ իմ Տեր, ինչպե՞ս եմ ես կարող որդի ունենալ, երբ ոչ մի տղամարդ չի դիպչել ինձ»: Նա ասաց. «Նույնիսկ այսպես – Ալլահը արարում է ինչ Նա է ցանկանում: Երբ Նա որոշում է որևէ բան, Նա միայն պետք է ասի «Եղի՛ր» և այն լինում է»»: (Ղուրան 3:47)

Ամեն դեպքում, Ղուրանը բացահայտում է, որ Հիսուսի կուսական ծնունդը չի փոխում նրա մարդկայնության վիճակը: Նրա արարումը նման է Ադամի արարմանը, ով չուներ ոչ հայր, ոչ էլ մայր:

إِنَّ مَثَلَ عِيسَىٰ عِنْدَ اللَّهِ كَمَثَلِ آدَمَ خَلَقَهُ مِنْ تُرَابٍ ثُمَّ قَالَ لَهُ كُنْ
فَيَكُونُ

«Իրոք, Հիսուսի օրինակը, Ալլահի տեսանկյունից նման է Ադամին: Նա արարեց նրան հողից և ասաց. «Եղիբ» և նա եղավ»: (Ղուրան 3:59)

ՀՐԱՇՔՆԵՐ

Հիսուսի ծառայության Ղուրանական տեսակետը հաստատում է նրա հրաշքների մեծամասնությունը,⁶⁸ որոնք նշվել են Աստվածաշնչի մեջ և ճանաչում է որոշները, որոնք չի նշել Աստվածաշունչը: Օրինակ, Ղուրանը տեղեկացնում է, որ Հիսուսը **սկսած իր ծննդից**, Աստծո մարգարեն էր, և նրա առաջին հրաշքը այն էր, երբ նորածին ժամանակ նա խոսեց: Հիսուսի ծնունդից հետո, մարդիկ Մարիամին անառակության մեջ մեղադրեցին: Նրանց մեղադրանքներին պատասխանելու փոխարեն, նրա մատնանշեց իր նորածին զավակին:

فَأَشَارَتْ إِلَيْهِ قَالُوا كَيْفَ نُكَلِّمُ مَنْ كَانَ فِي الْمَهْدِ صَبِيًّا * قَالَ إِنِّي
عَبْدُ اللَّهِ أَنَا نَبِيُّ الْكِتَابِ وَجَعَلَنِي نَبِيًّا

«Երբ նա մատնանշեց նրան, նրանք ասացին. «Ինչպե՞ս ենք մենք կարող խոսել օրորոցի երեխայի հետ»: Նա, Հիսուսն ասաց. «Իրոք, Ես Ալլահի ծառան եմ: Նա տվել է ինձ զիր և ինձ դարձրել է Մարգարե»»: (Ղուրան 19:29-30)

Նրա մյուս հրաշքներից է հանգուցյալի հարությունը, բորոտի բժշկությունը և կույրին տեսողության պարզևր, Ղուրանը արձանագրում է մեկ այլ հրաշք, որը նշված չէ Աստվածաշնչի մեջ: Մարգարե Հիսուսը կավից թռչուններ էր պատրաստում, փչում էր նրանց վրա և նրանք թռչում էին, կենդանի թռչուններ: Սակայն տեսակետը, որը

⁶⁸ Հիսուսի Աստվածաշնչյան պատմություններից է, գինին ջրի վերածելը Հովհաննես 2:1-10 , որը Ղուրանի մեջ ամբողջովին բացակայում է:

մատնանշում է Ղուրանը այն է, որ Հիսուսի ներկայացրած յուրաքանչյուր հրաշք կատարվում էր Աստծո թույլտվությամբ և նա մարդկանց տեղեկացնում էր այդ: Նա իր հետևորդներին պարզաբանեց, որ նա միայնակ չէր գործում հրաշքները, նույն կերպ, ինչպես Մարգարեներն էին պարզաբանում նրանց, ովքեր շրջապատում էին իրենց:

Դժբախտաբար, նրանք, ովքեր հայտնում են Հիսուսի Աստվածայնությունը, սովորաբար նրա հրաշքները վերցնում են որպես վկայություն: Ամեն դեպքում, ըստ Հին Կտակարանի գրառումների, մյուս մարգարեները նույնպես գործել են նմանատիպ և համապատասխան հրաշքներ:

<p>Հիսուսը 5000 մարդ կերակրեց հացի հինգ և ձկան երկու կտորով:</p>	<p>Եղիան 100 մարդ կերակրեց զարու հացի քսան և 7 հացահատիկի մի քանի կտորներով (Թագավորաց Բ 4:44)</p>
<p>Հիսուսը բժշկեց բորոտներին</p>	<p>Եղիան բժշկեց բորոտ Նաամանին (Թագավորաց Բ 5:14)</p>
<p>Հիսուսը կույրի տեսողության պատճառ հանդիսացավ:</p>	<p>Եղիան կույրի տեսողության պատճառ հանդիսացավ (Թագավորաց Բ 6:17 և 20)</p>
<p>Հիսուսը հանգուցյալին հարություն տվեց</p>	<p>Եղիասը նույնը արեց Թագավորաց Ա 17:22 Նմանատիպ գործեց նաև Եղիան (Թագավորաց Բ</p>

	4:34) Նույնիսկ Եղիայի ոսկորները կարող են վերադարձնել հանգուցյալին (Թագավորաց Բ 13:21)
Հիսուսը քայլեց ջրի վրա	Մովսեսը և իր ժողովուրդը անցավ Մեռյալ ծովը (Ելք 14:22)

Նույնպես, Նոր կտակարանի մեջ գոյություն ունեն տեքստեր, որոնք հաստատում են, որ Հիսուսը ինքն իրեն չի գործել: Հովհաննես 5:30 մեջ է բերում Հիսուսին, ով ասում է. «Ես ինքս ինձ ոչինչ չեմ կարող անել...» և Ղուկաս 11:20 ասում է. «Սակայն, եթե ես Աստծո մատով դուրս գցեմ սատանաներին, անկասկած Աստծո Թագավորությունը կգա ձեզ»: Գործք 2:22 Պողոսը գրառում է. «Իսրայելի ժողովուրդ, լսեք այս խոսքերը. Նազովրեցի Հիսուսը, մարդ, ում Աստված հաստատեց հզոր գործերով և հրաշքներով և նշաններով, որը Աստված արեց նրա միջոցով ձեր մեջ, ինչպես դուք ինքներդ գիտեք...»

ՀԻՍՈՒՄԻ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ «ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ»

Գոյություն ունեն մի շարք տարբերակներ, որոնք թարգմանել են Կաթոլիկ և Բողոքական Եկեղեցիները որպես Հիսուս Քրիստոսի Աստվածայնության վկայություն: Ամեն դեպքում, տվյալ տարբերակների մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո, ակնհայտ է դառնում, որ կամ նրանց խոսքերն են երկակի, որոնք բաց տարածություն են թողնում են տարբեր թարգմանությունների համար, կամ դրանք լրացումներ են, որոնք չեն գտնվել Աստվածաշնչի վաղ ձեռագրերի մեջ: Ահա ամենատարածված մեջբերվող փաստարկներից մի քանիսը.

1. ԱԼՖԱ և ՕՄԵԳԱ

Հայտնություն Ա, տարբերակ 8 ենթադրում է, որ Հիսուսը իր մասին ասել է հետևյալը. «Ես Ալֆան եմ և Օմեգան, սկիզբը և ավարտը, ասաց Տերը, որը գոյություն ունի, եղել է և որը կլինի, Ամենաբարձրյալը»: Մրանք Աստծո հատկանիշներն են: Ուստի, Հիսուսը, ըստ վաղ Քրիստոնյաների, այստեղ հայտարարում է աստվածայնությունը: Ամեն դեպքում, վերոհիշյալ խոսքերը ըստ Արքա Ջեյմսի Տարբերակի են: Վերանայված Տիպական Տարբերակի մեջ աստվածաշնչյան գիտնականները ուղղել են թարգմանությունը և գրառել են. «Ես Ալֆան եմ և Օմեգան», ասաց Տեր Աստվածը, ով գոյություն ունի և եղել է և ով կլինի, Ամենաբարձրյալը»: Կաթոլիկների ներկայացրած Նոր Ամերիկյան Աստվածաշնչի մեջ նույնպես գոյություն ունեն ուղղումներ: Տվյալ տարբերակի թարգմանությունը փոփոխվել է, որտեղ դրվել է իր ճիշտ գաղափարը, որն էլ

հետևյալն է. **«Տերը, Աստված** ասաց. «Ես եմ Ալֆան և Օմեգան, մեկը, ով գոյություն ունի և ով եղել է և ով կլինի, Ամենաբարձրյալը»»: Տվյալ ուղղումների շնորհիվ ակնհայտ է դառնում, որ սա հանդիսանում է Աստծո, այլ ոչ թե Մարգարե Հիսուսի հայտարարությունը:

2. ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Սովորաբար կիրառության մեջ են դնում մեկ այլ տարբերակ, որպեսզի աջակցեն Հիսուսի աստվածայնությանը, Հովհաննես 8:58. «Հիսուսը ասաց նրանց, «Իրոք, իրոք ես ասում եմ ձեզ, Մինչ Աբրահամը, ես գոյություն ունեի»: Տվյալ տարբերակը նշում է, որ Հիսուսը գոյություն է ունեցել երկրի վրա մինչ իր կերպարանքը: Կարելի է եզրակացնել, որ Հիսուսը պետք է որ Աստված լինի, մինչդեռ նրա գոյությունը նախորդում է նրա երկրային ծնունդը: Ամեն դեպքում, մարգարեների և ընդհանուր առմամբ մարդու նախագոյության գաղափարը գոյություն ունի և Հին Կտակարանում և Ղուրանի մեջ: Երեմիան նկարագրում է իրեն Երեմիա Գրքի 1:4-5 մեջ հետոյալ կերպ. «⁴Այժմ Տիրոջ խոսքը եկավ ինձ ասելով, ⁵«Մինչ ես ձևավորել եմ քեզ արգանդի մեջ, ես իմացել եմ քեզ, և մինչ դու լույս աշխարհ ես եկել, և նվիրել եմ քեզ: Ես նշել եմ քեզ որպես մարգարե ժողովուրդների»»:

Հաղորդում են, որ Առակաց 8:23-27 – ի մեջ Մարգարե Սողոմոնը ասաց. «²³ Դարեր առաջ, Ես եկել եմ առաջինը, մինչ երկրի սկիզբը: ²⁴Երբ գոյություն չունեի ոչ մի խորք, ես եկել եմ, երբ գոյություն չունեի ոչ մի գարուն հորդացող ջրով, ²⁵մինչ ձևավորվել են լեռները, մինչ բլուրները, ես եկել եմ; ²⁶ մինչ նա արարել է երկիրը իր դաշտերով, կամ

աշխարհի առաջին փոշով ²⁷Երբ հաստատվել է երկինքները, Ես այնտեղ էի»:

Ըստ Յոբ 38:4 և 21-ի Աստված դիմել է Մարգարե Յոբին հետևյալ կերպ. «⁴Որտե՞ղ էիք դուք, երբ Ես դրեցի հիմքը երկրի: Ասացե՞ք ինձ, եթե դուք ունեք հասկացողություն... ²¹Դուք Տեղյակ եք, քանի որ դուք ծնվել եք այնուհետև և ձեր օրերի քանակը հիասքանչ է»:

Ղուրանի մեջ,ալ-Արասաֆ գլուխ 7:172,Աստված հաղորդեց,որ մարդը գոյություն ունի հոգևոր տեսքով, մինչ նյութական աշխարհի արարումը.

وَإِذْ أَخَذَ رَبُّكَ مِنْ بَنِي آدَمَ مِنْ ظُهُورِهِمْ ذُرِّيَّتَهُمْ وَأَشْهَدَهُمْ عَلَىٰ
 أَنفُسِهِمْ أَلَسْتُ بِرَبِّكُمْ قَالُوا بَلَىٰ شَهِدْنَا أَن نَقُولُوا يَوْمَ الْقِيَامَةِ إِنَّا كُنَّا
 عَنْ هَذَا غَافِلِينَ

«Երբ ձեր Տերը հավաքեց Ադամի բոլոր հետևորդներին մինչ արարումը և դարձրեց նրանց վկաներ, ասելով. «Արդյո՞ք ես ձեր Տերը չեմ՞՝ Նրանք բոլորը պատասխանեցին.Այո, իրոք, մենք վկայում ենք: Այսպիսով, դու չեք կարող ասել Դատաստանի Օրը. «Մենք անտեղյակ էինք դրանից»»:

Ուստի, Հիսուսի հայտարարությունը, որ «Մինչ Աբրահամը, Ես եմ» չի կարող կիրառվել որպես իր աստվածայնության վկայություն: Հովհաննես 8:54-58 կոնտեքստի մեջ Հիսուսը կարծեցյալ ասել է Իր մարգարեների Աստծո գիտության մասին, որը նախորդում է այս աշխարհի արարմանը:

3. ԱՍՏՈՆ ՈՐԴԻՆ

Այլ վկայություններից մեկը, որը կիրառում են Հիսուսի աստվածայնության համար նրա «Աստծո Որդի» կոչումն է: Ամեն դեպքում, Հին Կտակարանի մեջ գոյություն ունեն բազմաթիվ հաստվածներ, որտեղ տվյալ տիտղոսը տվել են մյուսներին:

Աստված կոչեց Իսրայելին, (Մարգարե Հակոբ) Իր «որդի» երբ Նա հրահանգեց Մարգարե Մովսեսին գնալ Փարավոնի մոտ Ելք 4:22-23-ի մեջ, «²²Եվ դուք պետք է ասեք Փարավոնին, «Ուստի ասաց Տերը, «Իսրայելը իմ առաջնեկն է, ²³և Ես ասում եմ ձեզ «Թող իմ որդին գնա, որպեսզի ի վիճակի լինի ծառայել ինձ»:⁶⁹

Թագավորաց Բ 8:13-14- ի մեջ Աստված Մարգարե Սողոմոնին կոչում է Իր որդին, «¹³Նա, Սողոմոնը կկառուցի տուն, իմ անունով և Ես կհաստատեմ նրա թագավորության գահը հավերժ: ¹⁴Ես կլինեմ նրա հայրը և նա կլինի իմ որդին»:

Աստված խոստացել է Մարգարե Դավթին դարձնել Իր որդին Սաղմոսներ 89:26-27- ի մեջ. «²⁶Նա կկոչի առ ինձ, «Դու իմ հայրն ես իմ Աստված և իմ փրկության ժայռը»,²⁷Նույնպես, Ես նրան կդարձնեմ իմ առաջնեկը, ավելի բարձր, քան երկրի արքաները»:⁷⁰

⁶⁹ Տես նույնպես, Օսեե 1:10, Արքա Ջեյմսի Տարբերակ

⁷⁰ Վերանայված Տիպական Տարբերակի մեջ այն հայտնում է. «Եվ, ես կդարձնեմ նրան առաջնեկ, երկրի արքաներից ամենաբարձրը»: Տես նույնպես Երեմիա 31:9, «... քանի որ Ես հայրը իսրայելին և Եփրահիմը իմ առաջնեկն է»:

Յոբի գրքի 1:6- մեջ հրեշտակներին նշել են որպես «Աստծո որդիներ», «Այժմ գոյություն ունեւ մեկ օր, երբ Աստծո որդիները եկան իրենց ներկայացնելու Տիրոջ առջև և Սատանան նույնպես եկավ նրանց մեջ»:⁷¹

Նոր Կտակարանի մեջ, գոյություն ունեն շատ «Աստծո որդիներ», որոնք Հիսուսից բացի վերաբերվում են մեկ այլին: Օրինակ, Ղուկասի Ավետարանը նշեց Հիսուսի նախնիներին մինչ Ադամը, նա գրառեց. «Ենուսի որդի, Սեթի որդի, Ադամի որդի, Աստծո որդի»:⁷²

Ոմանք հայտնում են, որ Հիսուսի դեպքի եզակիությունը այն է, որ նա Աստծո միակ ծնված⁷³ Որդին է, մինչդեռ մնացյալները պարզապես «Աստծո որդիներ են»: Ամեն դեպքում, Սաղմոս 2:7-ի մեջ հաղորդում են Աստծո խոսքերը Մարգարե Դավիթին, «Ես կպատմեմ Տիրոջ որոշումը. Նա ասաց ինձ, «Դու իմ որդին ես, այսօր ես ծնել եմ քեզ»:

Պետք է նշել, որ Ավետարաններից ոչ մեկի մեջ Հիսուսը փաստացի իրեն չի կոչել «Աստծո Որդի»:⁷⁴ Փոխարենը, նա

⁷¹ Տես նույնպես Յոբ 2:1 և 38:4-7: Այլ մեջբերումներ, որոնք վերաբերվում են Աստծո որդիներին, կարելի է գտնել Ծննդոց 6:2, Երկրորդ Օրենք 14:1 և Օսեե 1:10

⁷² Ղուկաս 3:38

⁷³ «Ծնյալ» տերմինը Հին Անգլերենով նշանակում էր «հայր լինել» և այն կիրառում էին տարբերակելու Հիսուսի, ով ենթադրաբար հանդիսանում է Աստծո որդի, «որդի» տերմինի փոխաբերական կիրառությունը վերաբերվում է Աստծո «արարված որդիներին»:

⁷⁴ Նոր Կտակարանի Գործք Գրքի մեջ, գոյություն ունեն Հիսուսի վաղ աշակերտների ուրվագծային ճառերը, ճառեր, որոնց

անընդհատ, բազմաթիվ անգամներ կոչել է իրեն «մարդու Որդի» (Ղուկաս 9:22): Ղուկաս 4:41-ի մեջ նա փաստացի ժխտում է «Աստծո Որդի» կոչումը. «Եվ սատանաները նույնպես շատ դուրս են գալիս, բղավելով», Դու Աստծո Որդին ես: «Սակայն նա կշտամբեց նրանց և թույլ չտվեց նրանց խոսել, որովհետև նրանք տեղյակ էին, որ նա Քրիստոսն էր»:

Քանի որ Հրեաները հավատում էին, որ Աստված Մեկն է և չունի ոչ կին ոչ էլ զավակներ, ցանկացած գրական իմաստով, ակնհայտ է, որ «Աստծո որդի» արտահայտությունը ուղղակի նրանց համար նշանակում է «Աստծո Ծառա»; մեկը, ով ի շնորհիվ իր հավատարիմ ծառայության, մերձեցել և սիրելի էր դարձել Աստծուն,

ժամանակահատվածը հասնում է 33, համարյա քառասուն տարի Չորս Ավետարաններից առաջ: Այդ ճառերից մեկը, որը վերաբերվում է առանձնապես «Աստծո մարդուն» (Գործք 2:22) Ոչ մեկ անգամ, հավատքի տվյալ խոստովանությունները կիրառում են «Աստծո Որդի» արտահայտությունը, սակայն, նրանք մի քանի անգամ չեն խոսում Հիսուսի մասին, որպես Աստծո ծառա և մարգարե (Գործք 3:13,22,23,26) Տվյալ ճառերի կարևորությունը այն է, թե նրանք ճշգրտորեն անդրադառնում են բնօրինակ հավատքին և աշակերտների տերմինաբանությանը, մինչև հավատքը և տերմինաբանությունը ներառվել են Հռոմեական կրոնի և Հունական փիլիսոփայության ազդեցության տակ: Նրանք անդրադառնում են սովորույթի, որը ավելի հին է, քան այն, որը կիրառում էին Չորս Ավետարանները, որտեղ Հիսուսը չի ներառվել աստվածայնության կամ աստվածային որդի լինելու մեջ: (Մահմեդական տեսանկյունից Աստվածաշնչի Ուսումնասիրություններ էջ.12)

ինչպես որդին, հորը:Քրիստոնյաները, ովքեր ունեն շունական, շոմեական ծագում, ավելի ուշ այս տերմինը սխալ կերպով կիրառեցին: Իրենց ժառանգության մեջ, «Աստծո որդի» նշանակում է աստծո մարմնավորումը կամ որևէ մեկը, ով ծնվել է արական և իգական սեռի աստվածների մարմնական միությունից:⁷⁵Երբ Եկեղեցին մի կողմ դրեց իր Հրեական ծագումը, այն որդեգրեց «Աստծո որդի» հեթանոս գաղափարը, որը ամբողջովին տարբերվում էր Հրեական կիրառությունից:⁷⁶

Ուստի, «Աստծո որդի» տերմինի կիրառությունը կարող է միայն հասկացվել Աստծո գրական ժառանգների Մեմական և ոչ թե հեթանոս խորհրդանշական իմաստով: Չորս Ավետարանների մեջ, Հիսուսը կարծեցյալ ասել է «Օրհնյալ են խաղաղություն պահպանողները; նրանց կկոչեն Աստծո որդիներ»:⁷⁷

Նմանապես, Հիսուսի աբբա, «Միրելի հայր» տերմինի կիրառությունը պետք է նման կերպ հասկանալ: Նոր Կտակարանի գիտնականների վիճում են, թե Հիսուսի ժամանակաընթացքում աբբա տերմինը ավելի ստույգ ինչ է նշանակում և նույնպես, թե ինչպես էին այն կիրառում սովյալ դարաշրջանի այլ Հրեական աղանդները:

⁷⁵ Տես Գործք 14:11-13; Լիսթրա քաղաքում, որը գտնվում է Թուրքիայի տարածքում, Պողոսը և Բարնաբան քարոզեցին և հեթանոսները հայտնեցին,որ նրանք մարմնավորված աստվածներ են: Բարնաբային նրանք կոչեցին շոմեական Ձեվս և Պողոսին շոմեական Հերմես աստված:

⁷⁶ Աստվածաշնչի Ուսումնասիրությունը Մահմեդական տեսանկյունից, էջ.15

⁷⁷ Մատթեոս 5:9

Ջեյմս Բարրը, վերջերս ստիպողաբար վիճել է այն մասին, որ այն չունի որոշակի նշված իմաստ, որը հաճախ վերագրում են, այլ ուղղակի նշանակում է «հայր»:⁷⁸ Աստծո մասին որպես «մեր երկրային Հայր» մտածելակերպը նոր իմաստ չունի, քանի որ Տիրոջ աղոթքը, որը նա ուսուցանել է իր աշակերտներին դիմելով Աստծուն, հանդիսանում էր նմանատիպ սովորական ձևը:

4. ՄԵԿԸ ԱՍՏՈՆ ՀԵՏ

Նրանք, ովքեր հայտնում են, որ Հիսուսը Աստված էր, պահում են այն միտքը, որ նա առանձին աստված չէր սակայն մեկը և նույն մարմնավորված Աստվածը: Նրանք դիմում են տվյալ հավատքի Հովհաննեսի Ավետարանի 30-րդ Տարբերակի, գլուխ 10 օգնությանը, որտեղ Հիսուսը ասել է. «Ես և Հայրը մեկ ենք»: Կոնտեքստից դուրս տվյալ տարբերակը չի ենթադրում Հիսուսի աստվածայնությունը: Ամեն դեպքում, երբ Հիսուսին մեղադրանք ներկայացրեցին աստվածայնության հայտարարության մեջ, հիմնվելով այս պնդմանը «Հիսուսը նրանց պատասխանեց, «Արդյո՞ք այն գրված չէ ձեր օրենքի մեջ, «Ես ասացի, արդյո՞ք դուք աստվածներ եք»»: ⁷⁹ ⁸⁰ Նա, նրանց քաջատեղյակ գրերի օրինակով, նրանց պարզաբանեց, որ նա կիրառում էր մարգարեների

⁷⁸ Աստվածաբանական Ուսումնասիրությունների Ամսագիր, հատոր 39 և Աստվածաբանություն, հատոր 91, համար 741

⁷⁹ Հիսուսը մեջ է բերում Սաղմոսները 82:6 «Ես ասել եմ «Դուք աստվածներ եք և դուք բոլորդ Ամենաբարձրայի զավակներն եք»»:

⁸⁰ Հովհաննես 10:34

փոխաբերական լեզուն, որը հնարավոր չէ թարգմանել որպես իրեն կամ մեկ այլ մարդ արարածի աստվածայնության վերագրություն:

Հետագա վկայությունները վերցվել են Հովհաննեսի Կտակարանի 14-րդ գլխի տաս և տասնմեկերորդ տարբերակներից, որտեղ մարդիկ խնդրեցին Հիսուսին ցույց տալ նրանց Հորը և ենթադրվում է, որ նա ասել է. «Արդյո՞ք դուք հավատք չեք ընծայում, որ Ես Հոր մեջ եմ և Հայրը իմ: Խոսքերը, որոնք ես ասել եմ ձեզ, չեմ խոսում ինձանից; սակայն Հորից, ով բնակություն է հաստատել իմ մեջ անում է իր գործը:¹¹ Հավատացեք ինձ, որ Ես Հոր մեջ եմ և Հայրը իմ; կամ ուղղակի հավատացեք ինձ հանուն արարքների»:

Այս արտահայտությունները պետք է որ նշեին Հիսուսի աստվածայնությունը, եթե նույն Ավետարանի հիշատակողին չարհամարեին: Ամեն դեպքում, իննը տարբերակ հետո, Հովհաննես 14:20-ի մեջ ենթադրաբար Հիսուսը նույնպես ասել է իր աշակերտներին. «Այդ օրը դուք կիմանաք, որ ես իմ Հոր մեջ եմ և դուք իմ և Ես ձեռք»: Ուստի, եթե Հիսուսի հայտարարությունը «Ես Հոր մեջ եմ և Հայրը իմ» նշանակում է որ նա Աստված է, ապա այսպիսին են նրա աշակերտները: Այս խորհրդանշական հայտարարությունը նշանակում է նպատակի և ոչ թե էության եզակիությունը: Խորհրդանշական թարգմանությունը հետագայում նշվում է Հովհաննես 17:20-21-ի մեջ, որտեղ Հիսուսը ասաց. «²⁰ Ես չեմ աղոթում միայն դրանց համար, սակայն նույնպես նրանց համար, ովքեր հավատում են ինձ իրենց խոսքերի միջով ²¹ որ նրանք

բոլորը կարող են լինել մեկ; նույնիսկ ինչպես Հայրը իմ մեջ և Ես նրա, որ նրանք նույնպես կարող են լինել մեր մեջ, այնպես որ աշխարհը կարող է հավատալ, որ նա ուղարկել է ինձ»:⁸¹

5. «ՆԱ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆԸ»

Վիճում են, որ քանի դեռ Հիսուսը ընդունել է իր մի քանի հետևորդների երկրպագությունը, նա պետք է որ Աստված լինի: Ամեն դեպքում, տեքստերի մանրակրկիտ ուսումնասիրությունները նշում են կասկածելի թարգմանության դեպքը, ինչպես նաև սխալ թարգմանությունը: «Երկրպագություն» տերմինը կարելի է գտնել Արքա Ջեյմսի Տարբերակի և Վերանայված Տիպական Տարբերակի հաշիվների մեջ, երեք իմաստունների, ովքեր եկել են արևելքից: Մատթեոս 2:2 հաղորդել է, որ «Որտե՞ղ է նորածինը, ով լինելու է Հրեաների արքա: Մենք տեսանք նրա աստղը, երբ այն ծագեց արևելքից և մենք եկել ենք երկրպագելու նրան»:⁸² Ամեն դեպքում Նոր Ամերիկյան Աստվածաշնչի մեջ, (Կաթոլիկ Մամուլ 1970թվ). Տեքստը ընթերցում է. «Որտե՞ղ է Հրեաների նորածին արքան: Մենք տեսել ենք նրա աստղը բարձրանալիս և եկել ենք նվիրել նրան երկրպագություն»:

Վերանայված Տիպական Տարբերակի մեջ, Հովհաննես 9:37-38 «³⁷Հիսուսն ասաց նրան, «Դու տեսել ես նրան և այդ նա է, ով խոսել է քեզ հետ»: ³⁸Նա ասաց. «Տեր, ես հավատում եմ»;

⁸¹ Նույնպես տես Հովհաննես 17:11

⁸² Տես նույնպես Մատթեոս 2:8

և նա երկրպագեց նրան»:⁸³Ամեն դեպքում, Ամերիկյան Աստվածաշնչի մեջ, գիտական թարգմանիչները ավելացնում են նշումներ, որոնք ասում է.

9:38 Տվյալ տարբերակը հեռացրել են կարևոր Գրերից, որը հնարավոր է լրացուցիչ է մկրտության պատարագի մեջ:

Տվյալ տարբերակը գոյություն չունի կարևոր հնագույն գրերի մեջ, որը ներառում է այս Ավետարանը: Միգուցե սա հետագա լրացում է, որը կատարել են Եկեղեցական դպիրները, որպեսզի կիրառեն մկրտության ծառայությունների ընթացքում:

Ավելին, որպես Աստվածաշնչի և նրա բնօրինակ լեզվի հռչակավոր հեղինակություն Ջորջ Մ. Լամսա, բացատրեց. «Արամերեն սագադ բառը, (երկրպագություն), նույնպես նշանակում է խոնարհվել կամ ծնկի գալ: Արևելքի մարդիկ, սովորաբար միմյանց ողջունելիս գլուխները խոնարհում են կամ կռանում:⁸⁴...«Նա երկրպագեց նրան» չի նշանակում, որ նա երկրպագեց նրան այնպես, ինչպես երկրպագում են Աստծուն: Նմանատիպ գործողությունը հրեաների աչքերում կարող է դիտվել պիղծ և Առաջին Պատվիրանի խզում և մարդուն կարող են ենթարկել

⁸³ Տես նույնպես Մատթեոս 28:9, «Եվ զգուշացեք, Հիսուսը հանդիպեց նրանց և ասաց, «ողջույն» Եվ նրանք մոտեցան և բռնեցին նրա ոտքերը և երկրպագեցին նրան»:

⁸⁴ Տես, օրինակ, Թագավորաց Ա 25:23, «Երբ Աբիգայլը տեսավ Դավիթին, նա շտապեց և ցած իջավ ավանակից և ընկավ Դավիթի առջև և խոնարհվեց գետնին»:

քարկոծման: Սակայն, նա ծնկի իջավ ի նշան մեծարանքի և երախտագիտության»:⁸⁵

Վերջին գիրը Ղուրանը, բացահայտում է երկրպագության խնդիրը կամ Հիսուսին չերկրպագելը, մեջ բերելով խոսակցությունը, որը Դատաստանի Օրը տեղի ունեցավ Հիսուսի և Աստծո միջև: Ալ-Մասաիդահ 5:116-7 Գլխի մեջ Ալլահն հայտնում է.

وَإِذْ قَالَ اللَّهُ يَا عِيسَى ابْنَ مَرْيَمَ أَأَنْتَ قُلْتَ لِلنَّاسِ اتَّخِذُونِي وَأُمَّي
الْهَيْنَ مِنْ دُونِ اللَّهِ قَالِ سُبْحَانَكَ مَا يَكُونُ لِي أَنْ أَقُولَ مَا لَيْسَ لِي
بِحَقِّ إِنْ كُنْتُ قُلْتُهُ فَقَدْ عَلِمْتَهُ تَعْلَمُ مَا فِي نَفْسِي وَلَا أَعْلَمُ مَا فِي
نَفْسِكَ إِنَّكَ أَنْتَ عَلَّامُ الْغُيُوبِ

«Երբ Ալլահը կասի. «Օվ Հիսուս, Մարիամի որդի, արդյո՞ք դու ասել ես մարդկանց » Երկրպագե՞ք ինձ և իմ մորը ինչպես երկու աստվածներ Ալլահի փոխարեն»... (Հիսուսը կասի). «Ես միայն ասել եմ նրանց այն, ինչ Դու պատվիրել ես ինձ ասել, «Երկրպագե՞ք Ալլահին, իմ Տիրոջը և ձեր Տիրոջը...»»:

6. «Սկզբում Խոսքն էր»

Միգուցե Հիսուսի աստվածայնության ամենահաճախակի մեջբերվող «վկայությունը» Հովհաննես 1:1 և 14-ն է, «¹ Սկզբում Խոսքն էր և Խոսքը Աստծո հետ էր և Խոսքը Աստված էր...¹⁴ Եվ Խոսքը դարձավ մարմին և բնակություն հաստատեց մեր մեջ, լի շնորհով և ճշմարտությամբ...» Ամեն դեպքում, ըստ Հովհաննեսի Ավետարանի տվյալ

⁸⁵ Լույսի Ավետարան 1936թվ. էջ.353 Մեջ է բերվել Հիսուս էջ.21

հայտարարությունները չի արել Հիսուս Քրիստոսը ,ոչ էլ հեղինակն է վերագրել է նրան :Ուստի այս տարբերակները չեն սահմանում Հիսուսի աստվածայնության վկայությունը,մանավանդ ենթադրելով կասկածները,որոնք առաջ են բերում Քրիստոնյա գիտնականները Չորրորդ Ավետարանի մասին:Աստվածաշնչյան գիտնականները, ուվքեր հեղինակել են հինգ Ավետարանները ասացին. «Երկու պատկերները, որոնք նկարագրել են Հովհաննեսը և տիպական ավետարանները,այսինքն Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարանները, չեն կարող երկուսն էլ լինել պատմականորեն ճշգրիտ»⁸⁶ Չորրորդ Ավետարանի

⁸⁶ Հովհաննեսի Ավետարանը այնքան ծայրահեղ է տարբերվում մյուս երեք Ավետարաններից, որ նրա վավերականությունը կասկածի տակ է դրվում: Օրինակ.

Տիպական Ավետարաններ	Հովհաննեսի Ավետարան
Հիսուսի հանրային ծառայությունը տևեց մեկ տարի	Հիսուսի հանրային ծառայությունը տևում է երեք տարի
Հիսուսը հակիրճ խոսեց տողերով և առակներով	Հիսուսը խոսեց երկար փիլիսոփայական ճառերով
Հիսուսը քիչ էր խոսում իր մասին	Հիսուսը լայնորեն արտացոլեց իր առաքելությունը և անհատականությունը
Տաճարներից գումարների դուրս հանումը վերջին իրադարձությունն էր, որը տեղի ունեցավ նրա <i>վաղ</i> առաքելության ընթացքում	Տաճարներից գումարների դուրս հանումը առաջին իրադարձությունն էր, որը տեղի ունեցավ նրա առաքելության <i>վերջին</i> ընթացքում
Հիսուսը պաշտպան էր կանգնում աղքատներին և ճնշվածներին	Հիսուսը շատ քիչ կամ ոչինչ չէր խոսում աղքատների և ճնշվածների մասին

մեջ զետեղված խոսքերը, որոնք վերաբերվում են Հիսուս Քրիստոսին, մեծամասնորեն Ավետարանչականների արարումն է և արտացոլում է Հովհաննեսի Քրիստոնեական համայնքի զարգացած լեզուն»:⁸⁷

Հունական տերմինը, որը կիրառում է Չորրորդ Ավետարանի անհայտ հեղինակը «խոսք» լոգոսն է:⁸⁸ Այդպես գործելով հեղինակը Հիսուսին նույնականացնում է Հունական փիլիսոփայության հեթանոս լոգոսի հետ, ով հանդիսանում էր աստվածային պատճառ, որը թաքնված էր տիեզերքի մեջ, հրամայելով նրան, տալով ձև և իմաստ:⁸⁹

Հունական մտքի լոգոս գաղափարը կարող է հասնել փիլիսոփա Հերակլեյթոսին, նվազագույնը Մ.թ 6 դար, ով ենթադրում էր, որ գոյություն ունի լոգոս տիեզերական գործընթաց, որը համապատասխանում մարդու

Հիսուսը գաղթական էր	Հիսուսը ոչ մի տեսակի գաղթականություն չի ցուցաբերում
Հիսուսին խաչում են ապրիլի 15-ին	Հիսուսին խաչել են ապրիլի 14-ին, օրը, երբ տեղի է ունենում Հրեական գատիկի զոհաբերությունը

⁸⁷ Հինգ Ավետարաններ էջ.10

⁸⁸ Հոգնակին լոգիոն է, որը նույնպես նշանակում է «պատճառ» կամ «ծրագիր»:

⁸⁹ Գաղափարը, որը սահմանվել է լոգոս տերմինով նույնպես կարելի է գտնել Հնդկական, Եգիպտական և Պարսկական փիլիսոփայական և աստվածաբանական համակարգերում: Նոր Բրիտանիկա Հանրագիտարան հատոր 7, էջ.440

պատճառաբանական հզորությանը: Ավելի ուշ, Ստոիկները⁹⁰ սահմանում են լոգոսը ինչպես ակտիվ, ռացիոնալ և հոգևոր սկզբունք, որը տարածում է ամբողջ իրականությունը:⁹¹ Հունախոս Հրեա փիլիսոփա Հուդաուս Ֆիլոն Ալեքսանդրիայից 15 Մ.թ.Ա -45 ուսուցանեց, որ լոգոսը միջանկյալ էր Աստծո և տիեզերքի միջև, լինելով արարման ազդակ և ազդակ, որի միջոցով մարդկային միտքը կարող է ըմբռնել Աստծուն:⁹² Ֆիլոյի գրերը ներկայացրել և տարածել է Եկեղեցին և ներշնչանք ապահովել խեղաթյուրված Քրիստոնեական փիլիսոփայական աստվածաբանությանը: Նա հեռացավ Պլատոնի մտքից, կապված լոգոս, Բանի, հետ և կոչեց այն «Աստծո առաջնեկ որդի»:⁹³

Հիսուսի ինքնահաստատումը լոգոսի հետ, հետագայում որպես ջանքերի արդյունք զարգացրեց վաղ Եկեղեցին, որի վրա աշխատեցին Քրիստոնյա աստվածաբանները և կողմնակիցները, որպեսզի արտահայտեն Քրիստոնեական հավատքը այն պայմաններում, որոնք հասկանալի կլինեն չելլենիստական աշխարհին: Ավելին, այն տեղի էր ունենում

⁹⁰ Ստոիկները փիլիսոփաներ են, ովքեր հետևում են մտածող Ջինո Քրիթիկուսի ուսմունքներին 4-3 դար Մ.թ.Ա

⁹¹ Նրանք լոգոսը կոչեցին հեռատես, բնական, աստված և տիեզերքի հոգի:

⁹² Ըստ Ֆիլոյի և Միջին Պլատոնականների, փիլիսոփաների, ովքեր կրոնական տեսանկյունից թարգմանեցին 4-րդ դարի Հունական վարպետ փիլիսոփա Պլատոնի ուսմունքները, լոգոսը հանդիսանում էր և ներհատուկ աշխարհում և միննույն ժամանակ մշտագո աստվածային միտք: Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 7. Էջ.440

⁹³ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 9, էջ386

տպավորելու ունկնդրին այն տեսակետով, որ Քրիստոնեությունը վերադաս է, կամ պետք է ժառանգել և որ ամենը հանդիսանում է հեթանոս փիլիսոփայության մեջ լավագույնը: Ուստի, վաղ Քրիստոնեական հայրերը իրենց պաշտպանության և բանավեճական աշխատությունների մեջ, հայտնում են, որ Քրիստոսը հանդիսանում է նախագոյություն ունեցող լոգոս:⁹⁴

Հունարեն «Աստված» բառը ,որը կիրառվել է «և Խոսքը Աստծո հետ էր» արտահայտության մեջ, «hotheos» որոշակի ձևը նշանակում է «Աստված»: Ամեն դեպքում երկրորդ «և Խոսքը Աստված էր» արտահայտության մեջ, հունարեն «Աստված» բառը հանդիսանում է «tontheos» անորոշ ձև, որն էլ նշանակում է «աստվածը»:⁹⁵ Հետևաբար Հովհաննես 1:1 պետք է ավելի մանրակրկինտ թարգմանել «Սկզբում Խոսքն էր և Խոսքը Աստծո հետ էր և Խոսքը աստված էր»: Ուստի, եթե Խոսքը «աստված» էր, գրական իմաստով, այն կարող է նշանակել, որ գոյություն ունեն երկու Աստվածներ և ոչ թե մեկ: Ամեն դեպքում, Բիբլիական լեզվի մեջ, «աստված» տերմինը կիրառվում է փոխաբերական իմաստով, հզորություն նշելու համար: Օրինակ, Պողոսը Կորնթացիներ Բ 4:4- մեջ սատանային նշեց որպես «աստված», «Իրենց դեպքում այս աշխարհի աստվածը կուրացրել է անհավատների մտքերը, որպեսզի նրանք չտեսնեն Քրիստոսի փառքի ավետարանի լույսը, ով Աստծո նմանակն է»: Ելք 7:1-ը նույնպես Մովսեսին նշել է «աստված», «Եվ Տերը ասաց Մովսեսին, «Տես Ես քեզ

⁹⁴ Իբիդ հատոր 7, էջ 440

⁹⁵ Քրիստոսը Իսլամում էջ.40-1

Աստված եմ դարձրել փարավոնի համար և Ահարոնը, քո եղբայրը պետք է լինի քո մարգարեն»:⁹⁶

⁹⁶ Սա ըստ Արքա Ջեյմսի և Հեղինակային Տարբերակների է: Վերանայված Տիպական Տարբերակի մեջ, տվյալ տարբերակի թարգմանությունը ասում է, «Եվ Տերը ասաց Մովսեսին, 'Տես ես քեզ դարձրել եմ ինչպես աստված Փարավոնի համար; և Ահարոնը, քո եղբայրը կլինի ձեր մարգարեն»:

ՀՆԱԳՈՒՅՆ ՄՏՔԵՐ

Գոյություն ունեւ լուրջ հակամարտություն Հիսուսի և նրա ուղերձի Երուսաղեմի և Պաուլինի թարգմանությաննեւրի մեջ: Տարիներ տևած այս հակամարտությունը վերջնականապես ուղղորդեց կատարյալ խզմանը, ըստ որի հիմնադրվեց Պաուլինյան Քրիստոնեական Եկեղեցին, որի արդյունքում կազմավորվեց նոր կրոն, որը առանձնացել էր Հուդդայականությունից: Մյուս կողմից Երուսաղեմի Նազովրեցիները իրենց կապերը չամրապնդեցին Հուդդայականության հետ, այլ համարեցին իրենց իրապես գործող Հրեաներ, ովքեր հավատարիմ են Թորային, ովքեր նույնպես հավատում են Հիսուսին, Մարդ Մեսսիայի կերպարին:⁹⁷

Երբ Հռոմեացիները ջախջախեցին Հրեական աբստամբությունը և 70 թվականին ավիրեցին նրանց Տաճարը, Հրեա Քրիստոնյաները ցրիվ եկան և նրանց իշխանությունը և ազդեցությունը որպես Մայր Եկեղեցի և Հիսուսի շարժման կենտրոն ավարտվեց:⁹⁸ Պաուլինյան Քրիստոնեական շարժումը, որը մինչ 66 Մ.Թ պայքարում

⁹⁷ Առասպել- Պատրաստողները էջ.172

⁹⁸ Յոթանասուն տարի անց, Քրիստոնեական Եկեղեցին վերահաստատվեց Երուսաղեմում, այն բանից հետո, երբ Հռոմեացիները երկրորդ անգամ ավիրեցին քաղաքը և վերակառուցեցին որպես Հեթանոս քաղաք, որը անվանեցին Աելիա Կապիտոլինա: Այս նոր Քրիստոնեական Եկեղեցին չունեցավ իր շարունակությունը վաղ «Երուսաղեմյան Եկեղեցու» որը առաջնորդում էր Ջեյմսը: Անդամները հեթանոս էին, ինչպես վկայում է Էսեփիուսը և ուսմունքը նույն Պաղիլիյան Քրիստոնեության ուսմունքն է: (Էսեփիուս, Եկեղեցական Պատմությունը III, հատոր 2-3, որը մեջ է բերում Առասպել Պատրաստողները էջ.174)

Էր ընդդեմ Երուսաղեմի խիստ անհավանության գոյատևման, սկսեց հասնել հաջողության:

Առաջնորդ Ջեյմսի Երուսաղեմյան Եկեղեցին, որը հայտնի է Նազովրեցիներ անվանմամբ, հետագայում հայտնի դարձավ Էբոնիթներ ստորացուցիչ կեղծանվամբ, որը Հրեերեն նշանակում է «աղքատ մարդ», որը որոշ Նազովրեցիներ որդեգրեցին հպարտությամբ, որպես Հիսուսի խոսքերի հիշատակություն, «Օրհնյալ են աղքատները»: Հունահռոմեական Եկեղեցու իշխանությունից հետո, ի շնորհիվ Պողոսի ուսմունքների մերժման⁹⁹ Նազովրեցիներին արհամարհեցին որպես հերետիկոսներ:

Ըստ հնագույն պատմաբան Իրանուսի, 185 Մ.Թ, Էբիոնիթները հավատում էին մեկ Աստծո, Արարչի, ուսուցանում էին, որ Հիսուսը Մեսսիա էր որը և կիրառվում էր միայն Մատթեոսի Ավետարանի մեջ և Պողոսին մերժում էր որպես Հրեական Օրենքի¹⁰⁰ ուխտադրուժ:

Հայտնի էր, որ Էբիոնիթները գոյություն ունեն մինչ 4-րդ դարը: Ոմանք լքեցին Պաղեստինը և հաստատվեցին Հորդանանում և Սիրիայում և հետագայում հայտնի դարձան որպես Ասիական Փոքրամասնություն, Եգիպտոսում և Հռոմում:¹⁰¹

⁹⁹ Առասպել Պատրաստողները էջ.175

¹⁰⁰ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 4, էջ.344

¹⁰¹ Իբիդ հատոր 4, էջ.344

Միապետությունը¹⁰², Հեթանոս Քրիստոնեական շարժումը, որը զարգացում ապրեց 2 և 3 –րդ դարերի ընթացքում, շարունակեց ներակայցնել Էբիոնիթների «ճայրահեղ» միաստվածական տեսակետ : Այն հաստատում էր, որ Քրիստոսը մարդ էր, ով բեղմանավորվել էր առեղծվածային կերպով, սակայն միայն «Աստծո Որդի» էր, ի շնորհիվ աստվածային իմաստության և հզորության: Տվյալ տեսակետը ուսուցանում էր Թեոդորոսը, 2-րդ դարի վերջին, Հռոմում, ում Վիկտոր Պապը պաշտոնանկ էր արել և ավելի ու ուսուցանեց Արթեմոնը, ում պաշտոնանկ արեց Ջեֆիրիմոս Պապը: Մոտ 260 թվականին այն նույնպես ուսուցանեց Պողոս Սամոսաթցին¹⁰³. ով հանդիսանում էր Սիրիայի Անտիոքի եպիսկոպոսը, ով բացահայտ քարոզում էր, որ Հիսուսը մարդ էր, ում միջոցով Աստված խոսեց իր Խոսքը, Լոգոսը և նա եռանդուն կերպով հաստատեց Աստծո կատարյալ միությունը:

263 և 268 թվականների միջև Անտիոքում տեղի ունեցան նվազագույնը երեք եկեղեցական խորհուրդներ, որոնք վիճարկեցին Պողոսի ուղղափառությունը: Երրորդը դատապարտեց այս ուսմունքը և հեռացրեց նրան: Ամեն դեպքում, Պողոսը վայելեց Ջենոբիայի, Պալմիրայի թագուհու հովանավորությունը, ում ենթակայության տակ տրվեց Անտիոքը և դա տեղի չունեցավ մինչ 272 թվականը, երբ կայսր Աուրելիոսը Ջենոբիային

¹⁰² Նույնպես հայտնի է որպես Միապետության Որդեգրված Դինամիկա.

¹⁰³ Բրիտանիկա Նոր Հնրագիտարան հատոր 8, էջ.244

պարտության մատնեց, որի ժամանակ էլ իրականցվեց փաստացի ավանդադրումը:¹⁰⁴

Երրորդ դարի վերջին և չորրորդ դարի սկզբին, Արիուսը (250 Լիբիա և 336) Եգիպտոսի Ալեքսանդրիայի երեցր նույնպես, ուսուցանեցին Քրիստոսի ավարտուն բնույթը և Աստծո կատարյալ եզակիությունը, որը գրավեց շատ հետևորդներ, մինչ այն պահը, երբ 325 թվականի Մայիսին Նիկիայի խորհուրդը նրան հայտարարեց հերետիկոս: Խորհրդի ընթացքում նա մերժեց ստորագրել հավատքի բանաձևը, որը հայտնում է, որ Քրիստոսը օժտված է Աստծո նմանատիպ աստվածային բնույթով: Ամեն դեպքում ազդեցիկ աջակցությունը Ասիական Փաքրամասնությունների համախոհների և Կոնստանտինոսի Դստեր, Կոնստանտինիայի ազդեցիկ աջակցության շնորհիվ, հաջողվեց Արիուսի վերադարձը վտարումից և նրա վերականգնումը եկեղեցում:¹⁰⁵ Շարժումը, որը ենթադրաբար պետք է սկսվեր, սակայն, որը փաստորեն երկարաձգում էր Երուսաղեմի Նագովրեցիների, Հրեական Քրիստոնյաների հավատքը, որը եկավ հայտնի դառնալու ինչպես Արիականություն և Հիսուսի աստվածայնության ներքին մեծ սպառնալիք դարձավ Պաուլինյան Քրիստոնեական ուղղափառ հավատքի մեջ:

337-ից մինչ 350 թվականները, Արևմուտքի կայսր Կոնստանսը համակրում էր Քրիստոնյա ուղղափառներին իսկ Արևելքի կայսր Կոնստանտինոս II, համակրում էր

¹⁰⁴ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 9 էջ.208

¹⁰⁵ Իբիդ հատոր 1 էջ.556-7

Արիացիներին: Արիացիների ազդեցությունը այնքան մեծ էր, որ 341 թվականի Անտիոքի եկեղեցական խորհրդի ընթացքում հռչակվեց հավատքի հաստատումը, որը ջնջեց այն հոդվածը, որ ուներ Հիսուսը, այսինքն «Հիսուսի աստվածային բնույթը հանդիսանում էր նույն Աստծո բնույթը»: 350 թվականին Կոնստանտինոս II դարձավ կայսրության բացառիկ կառավարիչ և իր ղեկավարության ներքո Նիկիայի կազմակերպությունը, որը հանդիսանում էր ուղղափառ քրիստոնյաների, կործանվեց: 361 թվականին Կոնստանտին II մահից հետո, Արևմուտքում ուղղափառ Քրիստոնյա մեծամասնությունը ամրացրեց իր դիրքը: Ամեն դեպքում, ուղղափառ Քրիստոնյա երրորդականների հավատքների կատարյալ միաստվածության պաշտպանությունը և ճնշումը Արևելքում, շարունակվեց Արիական կայսր Վալենտի օրոք 364-383: Մա սեեց մինչ այն պահը, երբ Կայսր Թեոդոսիոս I 379-395 ստանձնեց ուղղափառության պաշտպանությունը և Արիանականությունը վերջնականապես ջախջախվեց: «Ամեն դեպքում, մինչ 7-րդ դարի ավարտը, Արիուսի միասնական հավատքները շարունակեցին Գերմանական մի քանի ցեղեր»:¹⁰⁶

¹⁰⁶ Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 1 էջ.549-50

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Այսօր, Քրիստոնեության մեջ գոյություն ունեն շատ ժամանակակից գիտնականներ, ովքեր պահպանում են այն գաղափարը, որ Հիսուս Քրիստոսը Աստված չէր: 1977 թվականին, աստվածաշնչյան յոթ գիտնականներ, ներառելով առաջատար Անգլիկան և Նոր Կտակարանի աստվածաբաններ և գիտնականներ, տպագրեցին «Մարմնավորված Աստծո Առասպելը» անվամբ աշխատությունը, որը մեծ աղմուկ առաջացրեց Անգլիայի Եկեղեցու Ընդհանուր Սինոդում: Նախաբանի մեջ, խմբագիրը, Ջոն Հիքքը, գրառեց հետևյալը.

«Տվյալ գրքի հեղինակները համոզված են, որ քսաներորդ դարի վերջին մեկ այլ հսկա աստվածաբանական զարգացում է կոչ է անում: Կարիքը առաջ եկավ Քրիստոնեական ծագումների աճող գիտելիքներից և ներառեց գիտակցություն, որ Հիսուսը ինչպես ներկայացրել է Գործք 2.21 «մարդ էր, ում հավանություն էր տվել Աստված» որոշակի դերի համար, աստվածային նպատակով և նրա հետագա գաղափարը որպես մարմնավորված Աստված, մարդկային կյանք ապրող Սուրբ Երրորդության Երկրորդ Անձը մեզ համար առասպելական է, կամ նրա նշանակության բանաստեղծական արտահայտման ձև»:¹⁰⁷

Նոր Կտակարանի գիտնականների միջև գոյություն ունի մեծ համաձայնություն, ըստ որի պատմական Հիսուսը չի հայտարարել իր աստվածային լինելը, ինչը ավելի ուշ նրա

¹⁰⁷ Մարմնավորված Աստծո առասպել էջ. ix

համար կատարել է Քրիստոնեական միտքը. Նա չի պատկերացնում իրեն Աստված, կամ Աստված Որդի, ով մարմնավորվել է:¹⁰⁸ Նախկին արքեպիսկոպոս Մայքլ Ռամսին, ով ինքը Նոր Կտակարանի գիտնական էր հանդիսանում, գրառեց, որ.«Հիսուսը իրեն աստվածայնություն չի հայտարարել»:¹⁰⁹Նրա ժամանակակիցը, Նոր Կտակարանի գիտնական Ս.Ֆ.Դ Մուլը ասաց որ, «բարձր» Քրիստոսաբանության ցանկացած դեպք,որը կախված էր Հիսուսի իր մասին ենթադրյալ հայտարարությունների վավերականությունից, որը մասնավորապես արտահայտում է Չորրորդ Ավետարանը, անշուշտ հանդիսանում է անորոշ»¹¹⁰

Մարմնավորման ծագման ուսմունքների խոշոր ուսումնասիրության ընթացքում, Ջեյմս Դունը, ով հաստատում է ուղղափառ Քրիստոսաբանությունը, եզրակացրեց, որ «Հիսուսի սովորությունների վաղ շրջանում, գոյություն չունեին ոչ մի վկայություն, որը ազնվորեն կարելի է կոչել աստվածայնության գիտակցություն»:¹¹¹ Կրկին Բրայան Հեբբլեթուայթը, ավանդության Նիկիա-Քալքեդոնյան Քրիստոսաբանության հայտնի պաշտպանը խոստովանում է, որ «այլևս հնարավոր չէ պաշտպանել Հիսուսի աստվածայնությունը,Նրա իսկ Հայտարարության մեջբերմամբ»:¹¹² Հիբբլեթուայթը և Դունը և նմանատիպ այլ գիտնականներ, ովքեր մինչ այժմ հավատում են Հիսուսի

¹⁰⁸ Մարմնավորված Աստծո փոխաբերությունը էջ.27-28

¹⁰⁹ Հիսուսը և Կենդանի Անցյալը էջ.39

¹¹⁰ Քրիստոսաբանության ծագումը էջ.136

¹¹¹ Պատրաստված Քրիստոսաբանությունը մեջ էջ.60

¹¹² Մարմնավորում էջ.74

աստվածայնությանը, վիճում են, դրա փոխարեն Հիսուսը տեղյակ չէր, որ նա մարմնավորված Աստված էր: Սա հայտնի դարձավ միայն նրա հարությունից հետո:

Անգլիայի Եկեղեցու հայտնի եպիսկոպոսների մեջ, ովքեր կասկածի են ենթարկում Հիսուսի աստվածայնությունը, գտնվում է շիտակ Պատվելի պրոֆեսոր Դեյվիդ Ջենքինսը, Անգլիայում Դուրհամի Եպիսկոպոսը, ով բացահայտ հայտնեց, որ Հիսուսը Աստված չէր:¹¹³

Հետևյալ հոդվածը, որը մի քանի տարի առաջ հայտնվեց Դեյվի Նյուզի էջերում, պարզորեն նշում է կասկածների աստիճանը, կապված Հիսուսի աստվածայնության հետ, որը գոյություն ունեւ քահանաների միջև:

¹¹³ Տնտեսագետը, Սալիլ 1,1989, հատոր 311 համար 7596, էջ.19

**ԱՆԳԼԻԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՑՆՑՈՂ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԼՈՆԴՈՆ. Անգլիայի Անգլիկան եպիսկոպոսների ավելի քան կեսը ասում են, որ ի շնորհիվ այսօր տպագրված ուսումնասիրությունների, Քրիստոնյաները պարտավոր են հավատալ, որ Հիսուս Քրիստոսը Աստված էր: 39 եպիսկոպոսներից 31-ի քվեարկությունը ցույց է տալիս, որ նրանցից շատերը կարծում են, որ հնարավոր է Աստվածաշունչը ճշգրիտ չի նկարագրում Քրիստոսի հրաշքները, կուսական ծնունդը և հարությունը: Եպիսկոպոսներից միայն 11 են պնդում, որ Քրիստոնյաները Քրիստոսին պետք է հաշվի առնեն որպես Աստված և մարդ, մինչդեռ 19 ասացին, որ բավարար է Հիսուսին համարել «Աստծո գերագույն գործակալ»: Բոլորը մերժեցին տալ որոշակի կարծիք:

Քվեարկությունը տեղի ունեցավ Լոնդոնի շաբաթավերջի Հեռուստատեսության ամեն շաբաթ տեղի ունեցող կրոնական ցուցադրության, Հավատամքի կողմից:

«Դեյլի Նյուզ» 25/6/84

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՈՒՂԵՐՁԸ

Երկրորդ տարածայնությունը, «Հիսուսի Ուղերձը» միգուցե նկատի առնելու ամենակարևոր կետն է: Քանի որ, եթե Հիսուսը հանդիսանում էր Աստծո մարգարե, այլ ոչ թե մարմնավորված Աստված, ուղերձը, որը նա բերեց Աստծուց, հանդիսանում էր նրա առաքելության իմաստը:

ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Հիսուսի ուղերձի հիմքը հանդիսանում էր Աստծո կամքի հպատակությունը, որովհետև սա է հանդիսանում այն կրոնի հիմքը, որը Աստված պատվիրել է մարդուն, ժամանակի սկզբից ի վեր: Ղուրանի երրորդ մասի Աալ-Իմրասան Գլխի, տարբերակ 19 մեջ Աստված ասում է.

إِنَّ الدِّينَ عِنْدَ اللَّهِ الْإِسْلَامُ وَمَا اخْتَلَفَ الَّذِينَ أُوتُوا الْكِتَابَ إِلَّا مِنْ بَعْدِ مَا جَاءَهُمُ الْعِلْمُ بَغْيًا بَيْنَهُمْ وَمَنْ يَكْفُرْ بِآيَاتِ اللَّهِ فَإِنَّ اللَّهَ سَرِيعُ الْحِسَابِ

«Իրոք, կրոնը Ալլահի տեսանկյունից Իսլամն է, հպատակությունը»:

Արաբերեն լեզվով Աստծո կամքին հպատակվելը արտահայտվում է «Իսլամ» բառով: Ըստ Մատթեոսի Կտակարանի 7:22, Հիսուսը ենթադրյալ ասում է. «Ոչ բոլորը, ովքեր ասում են ինձ, «Տեր, Տեր» կմտնեն երկնային արքայություն, սակայն, նա, ով տալիս է իր կամքը, իմ Երկրային Հորը: «Տվյալ հայտարարության մեջ Հիսուսը շեշտում է «Հոր կամքը», որը հանդիսանում է մարդ արարածի կամքի հպատակությունը Աստծո կամքին: Հովհաննես 5:30 հաղորդում է, որ Հիսուսը նույնպես ասաց.

«Ես ոչինչ չեմ կարող անել իմ իշխանությամբ; ինչպես ես լսում եմ, ես դատում եմ; և իմ դատը արդար է, որովհետև ես չեմ փնտրում իմ իսկ կամքը, այլ նրա կամքը, ով ուղարկել է ինձ»:

ՕՐԵՆՔ

«Աստծո կամքը» շարունակվում է աստվածայնորեն հայտնված օրենքների միջոցով, որը մարգարեները ուսուցանում էին իրենց հետևորդներին: Ուստի աստվածային օրենքի հպատակությունը հանդիսանում է երկրպագության հիմքը: Ալ-Մաաիդահ գլխի 44 –րդ տարբերակի մեջ Ղուրանը հաստատում է աստվածային հայտնված օրենքների հպատակության կարիքը:

إِنَّا أَنْزَلْنَا التَّوْرَةَ فِيهَا هُدًى وَنُورٌ يَحْكُمُ بِهَا النَّبِيُّونَ الَّذِينَ أَسْلَمُوا
لِلَّذِينَ هَادُوا وَالرَّبَّانِيِّونَ وَالْأَحْبَارُ بِمَا اسْتَحْفَظُوا مِنْ كِتَابِ اللَّهِ
وَكَانُوا عَلَيْهِ شُهَدَاءَ فَلَا تَخْشَوُا النَّاسَ وَاخْشَوُا اللَّهَ وَلَا تَشْتَرُوا
بِآيَاتِي ثَمَنًا قَلِيلًا وَمَنْ لَمْ يَحْكَمْ بِمَا أَنْزَلَ اللَّهُ فَأُولَئِكَ هُمُ الْكَافِرُونَ

«Իրոք, Ես հայտնել եմ Թորան, որտեղ գտնվում էր ուղղորդությունը և լույսը, որի միջոցով մարգարեները, ովքեր հպատակվել են Աստծո կամքին, դատեցին Հրեաներին ... և նա, ով չի դատում ըստ Ալլահի հայտնածի, անհավատ է,»

Ըստ Մատթեոսի Կտակարանի 19:16-17-ի Հիսուսը հպատակվել էր աստվածային օրենքին, որը հանդիսանում է դրախտի բանալին. «¹⁶Այժմ զգուշացեք, մեկ մարդ եկավ և ասաց նրան, «Բարի ուսուցիչ, ի՞նչ բարի բան պետք է ես անեմ, որպեսզի ունենամ հավերժ կյանք»: ¹⁷Այսպիսով նա

ասաց նրան, «Ինչու՞ ես դու ինձ բարի կոչում: Ոչ ոք բարի չէ, բացառությամբ Մեկի, որը Աստվածն է: Սակայն, եթե դուք ցանկություն ունեք մտնել կյանք, պահպանեք պատվիրանները:»¹¹⁴ Նույնպես Մատթեոս 5:19 հաղորդում է, որ Հիսուս Քրիստոսը պնդել է խստորեն հպատակվել պատվիրաններին ասելով, «Ուստի, Նա, ով խախտում է այդ պատվիրանների նվազագույնը և ուսուցանում է մարդուն այդպես, կկոչվի նվազագույնը երկնային թագավորության մեջ; սակայն, ով գործում և ուսուցանում է նրանց, նա երկնային թագավորության մեջ կկոչվի վեհ»:

Աստվածային օրենքը մարդկության ուղղորդություն է ներկայացնում կյանքի ամեն ուղիներում: Այն նրանց համար սահմանում է ճիշտը և սխալը և մարդ արարածին առաջարկում է լիարժեք համակարգ, որը կարող է կառավարել իրենց բոլոր գործերը: Միայն Արարիչն է լավագույնս տեղյակ, թե ինչն է շահեկան Իր արարածի համար և ինչը ոչ: Ուստի, աստվածային օրենքները պատվիրում և արգելում են տարբեր գործողություններ և հիմք են հանդիսանում պաշտպանելու մարդկային ոգին, մարմինը և հասարակությունը վնասից: Որպեսզի մարդ արարծը լրացնի իր ներուժը ապրելով առաքինի կյանք, նա ունի Աստծոն երկրպագելու կարիք, հպատակվելով Նրա պատվիրաններին:¹¹⁵

Այս մի կրոն էր, որը Հիսուսը փոխանցում էր իր ուղերձով; հպատակություն մեկ ճշմարիտ Աստծո կամքին, հնազանդվելով Նրա պատվիրաններին: Հիսուսը շեշտեց իր

¹¹⁴ Արքա Ջեյմսի Տարբերակ և Լիագորված Տարբերակ

¹¹⁵ Արարածի Նպատակը էջ.42-3

հետևորդներին, որ իր առաքելությունը չի վերացնում օրենքները, որը ստացել էր Մարգարե Մովսեսը: Ինչ վերաբերում է Մովսեսին հաջորդող մարգարեներին, ինչպես Հիսուսը, նրանք պահպանեցին օրենքը: Ղուրանի ալ-Մաաիդահ գլխի 46-րդ տարբերակը նշում է, որ Հիսուսը իր ուղերձի մեջ հաստատել է Թորայի Օրենքները:

وَقَفَّيْنَا عَلَىٰ آثَارِهِم بِعِيسَى ابْنِ مَرْيَمَ مُصَدِّقًا لِّمَا بَيْنَ يَدَيْهِ مِنَ
التَّوْرَةِ وَآتَيْنَاهُ الْإِنجِيلَ فِيهِ هُدًى وَنُورٌ وَمُصَدِّقًا لِّمَا بَيْنَ يَدَيْهِ مِنَ
التَّوْرَةِ وَهُدًى وَمَوْعِظَةً لِّلْمُتَّقِينَ

«Եվ նրանց հետքերով Ես ուղարկեցի Հիսուսին, Մարիամի որդուն, հաստատելով Թորան, որը նախորդել էր իրեն և Ես տվեցի նրան Ավետարան, որտեղ գտնվում էր ուղղորդություն և լույս և Թորայի հաստատում, որը նախորդել էր դրան»,

Մատթեոս 5:17-18-ի մեջ Հիսուսն հայտնեց. «¹⁷Մի կարծեք, որ ես եկել եմ վերացնելու օրենքը և մարգարեների ուղղին; Ես չեմ եկել դրանք վերցնելու, այլ լրացնելու ¹⁸ Քանի որ Ես ասում եմ ձեզ, մինչ երկնքի և երկրի ավարտը, ոչ մի կաթիլ, ոչ էլ կետ չի անցնի օրենքից, մինչ այն չլրացվի»: Ամեն դեպքում, Պողոսը,ով հայտնեց, որ ինքը հանդիսանում էր Հիսուսի աշակերտը, պարբերաբար վերացնում էր օրենքները: Հռոմեացիներին ուղղված իր նամակի մեջ, գլուխ 7:6, նա ասում է, «Սակայն այժմ մենք ազատվում ենք օրենքից, մահ նրան, ինչը մեզ պահում է գերի, այնպես որ մենք չճառայենք հին գրված օրենսգրքով, սակայն Որգու նոր կյանքով»:

ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Հիսուսը եկավ որպես մարգարե և ինչպես իր նախորդները, կոչ արեց մարդկանց երկրպագել միայն Աստծուն: Ղուրանի ան-Նահլ գլխի 16:36 մեջ Աստված ասում է.

وَلَقَدْ بَعَثْنَا فِي كُلِّ أُمَّةٍ رَسُولًا أَنِ اعْبُدُوا اللَّهَ وَاجْتَنِبُوا الطَّاغُوتَ
فَمِنْهُمْ مَن هَدَى اللَّهُ وَمِنْهُمْ مَن حَقَّتْ عَلَيْهِ الضَّلَالَةُ فَسِيرُوا فِي
الْأَرْضِ فَانظُرُوا كَيْفَ كَانَ عَاقِبَةُ الْمُكْذِبِينَ

«Իրոք, Ես¹¹⁶ ուղարկել եմ յուրաքանչյուր ազգին մարգարե ասելով. «Երկրպագեք Ալլահին և խուսափեք կեղծ աստվածներից»»:

Ղուկաս 3:8-մեջ Սատանան Հիսուսին ասում է երկրպագել իրեն, խոստանալով նրան աշխարհի բոլոր թագավորությունների իշխանությունը և փառքը, «Եվ Հիսուսը պատասխանեց նրան, «Գրված է, Դու պետք է երկրպագես Տիրոջը, քո Աստծուն և միայն նրան դու պետք է ծառայես»»: Ուստի, Հիսուսի ուղերձի իմաստը այն է, որ միայն Աստված է արժանի երկրպագության և որ Աստծուց բացի որևէ մեկի կամ բանի կամ նրան համահավասարի երկրպագությունը կեղծ է: Հիսուսը ոչ միայն կոչ արեց մարդկանց այս ուղերձին, այլ նա նույնպես գործնականորեն ցուցադրեց այդ նրանց, խոնարհվելով աղոթքի ընթացքում և երկրպագելով Աստծուն: Մարկոս 14:32-ը հայտնում է. «Եվ նրանք գնացին մի վայր, որը կոչվում էր Գեթսեմանե և նա, Հիսուսը, ասաց իր

¹¹⁶ Գրականորեն «Մենք» որը հայտնի է որպես «արքայական մենք» կամ քարձրյալ մենք « վերաբերվում է Ալլահին»

աշակերտներին, «Նստեք այստեղ մինչ ես կադոթեմ»»: Ղուկաս 5:16 ասում է. «Եվ նա հեռացավ անապատ և ադոթեց»:

Հիսուսը կոչ արեց նրանց երկրպագել մեկ, ճշմարիտ Աստծո, ով եզակի է Իր հատկանիշների մեջ: Աստված չունի իր արարածների ածականները, ոչ էլ որևէ արարած կիսում է Նրա ածականներից որևէ մեկը: Մատթեոս 19:16-17- մեջ, երբ մի մարդ կոչեց Մարգարե Հիսուսին «բարի» ասելով «Բարի ուսուցիչ, ի՞նչ լավ բան եմ ես կարող անել, որպեսզի մտնեմ հավերժ կյանք»: Մարգարե Հիսուսը պատասխանեց, «Ինչու՞ ես ինձ բարի կոչում: Ոչ ոք բարի չէ, բացառությամբ Մեկի, որը Աստվածն է»: Նա ժխտեց իր «անսահման բարության» կամ «կատարյալ բարության» ածականը և հաստատեց, որ այն պատկանում է միայն Ալլահին:

Այսօր Քրիստոնյաների մեծամասնությունը ադոթում է Հիսուսին, հայտնելով, որ նա է Աստված: Նրանց մեջ գտնվող փիլիսոփաները հայտնում են, որ նրանք չեն երկրպագում Հիսուս մարդուն, այլ Աստծուն, ով դրսևորվում է Հիսուս մարդու մեջ: Սա նույնպես հիմնավորում է հեթանոսներին, ովքեր խոնարհվում են երկրպագելով կուռքերին: Երբ մի հեթանոս փիլիսոփայի հարցրեցին, թե ինչու է նա երկրպագում կուռքին, որը մարդն է պատրաստել, նա պատասխանեց, որ նա իրականում չի երկրպագում դրան: Ավելին, նա կարող է հայտնել, որ կուռքը հանդիսանում է միայն Աստծո ներկայության կիզակետը և ուստի հայտնում է, որ երկրպագում է Աստծուն, ով դրսևորվում է կուռքի միջոցով և ոչ թե ինքը, ֆիզիկական կուռքը: Գոյություն ունի շատ քիչ կամ

ընդհանրապես գոյություն չունի տարբերություն այդ բացատրության և այն պատասխանի միջև, որը տվեց Քրիստոնյան, Հիսուսին երկրպագելիս: Տվյալ շեղման սկզբնաղբյուրը ընկած է այն կեղծ հավատքի մեջ, թե Աստված ներկա է Իր արարածի մեջ: Նմանատիպ հավատքը արդարացնում է Աստծո արարածի երկրպագությունը:

Հիսուսի ուղերձը, որը մարդկությանը հորդորում էր երկրպագել միայն մեկ Աստծո, նրա մեկնումից հետո ենթարկվեց աղավաղման: Ավելի ուշ, հետևորդները, սկսած Պողոսից, շրջեցին այդ անբիծ և պարզ ուղերձը բարդ երրորդության փրկիստփայության, որը արդարացրեց Հիսուսի և այնուհետ Հիսուսի մոր, Մարիամի¹¹⁷, հրեշտակների¹¹⁸ և սրբերի երկրպագությունը:

¹¹⁷ Կոչվելով Սուրբ Մարիամ, սկսած առաքելական դարաշրջանից նա դարձավ Քրիստոնեական Եկեղեցու երկրպագության առարկա: Նրան տվեցին թեոթոկոս անվանումը, որը նշանակում է «Աստծո –կող» կամ «Աստծո մայր» 3-րդ կամ 4 –րդ դարերում: Մարիամին վերաբերվող տարածված պաշտանմունքներից են տոնախմբությունները, նվիրված ծառայությունները և տերոգորմյան, որը հսկայական կարևոր դեր խաղաց Հռոմեական Կաթոլիկների և Ուղղափառների կյանքում (Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 7, էջ.897-8 և հատոր 16 էջ.278-9)

¹¹⁸ Հրեշտակներ Միքայելին, Գաբրիելին և Ռաֆայելին դարձրեցին սրբեր և կրոնական տոները, որոնք հայտնի են Միքայելմաս (որը կոչվում է «Սուրբ Միքայելի և Բոլոր Սրբերի Տոնախմբություն» որը հաստատել է Անգլիկանները) նվիրված են նրանց ըստ Արևմտյան եկեղեցիների Սեպտեմբերի 29-ին և Նոյեմբերի 8-ին ըստ Արևելյան Ուղղափառ Եկեղեցու: Սուրբ Միքայելի պաշտանմունքը սկսվեց 4-րդ դարում, Արևելյան Եկեղեցու կողմից: Ի շնորհիվ Սուրբ Միքայելի այն դիրքի, որ նա հանդիսանում է երկնային բանակների ղեկավար, բոլոր հրեշտակների ակնածանքը միացված է նրա պաշտանմունքին:

Կաթոլիկները ունեն սրբերի երկար ցուցակ, ում դիմում են կարիքի դեպքում: Եթե որևէ բան է կորում, ապա աղոթում են Սուրբ Ակոնիոս Թեբեսացուն, որպեսզի նա օգնի գտնել այն:¹¹⁹ Սուրբ Ջուդ Թադդեուսը անհնարինի գլխավոր սուրբն է և նրան են աղոթում անբուժելի հիվանդությունների, անհնար ամուսնությունների կամ նմանատիպ դեպքերի ժամանակ:¹²⁰ Սուրբ Քրիստափորը հանդիսանում էր ճանապարհորդների գլխավոր սուրբը, ում պաշտպանության համար աղոթում էին ճանապարհորդները, մինչ 1969 թվականը, երբ նրան ըստ պապի որոշման, պաշտոնապես դուրս հանեցին սրբերի ցուցակից, այն բանից հետո, երբ հաստատեցին, որ նա կեղծ էր:¹²¹ Չնայած նրան պաշտոնապես դուրս հանեցին սրբերի ցուցակից, այսօր աշխարհի շատ կաթոլիկներ դեռ աղոթում են Սուրբ Քրիստափորին:

«Սրբերին» երկրպագելը հակասում և կոռուպացնում է Մեկ Աստծո երկրպագությունը; և այն սին է, որովհետև ոչ կենդանին, ոչ էլ հանգուցյալը չեն կարող պատասխանել մարդկության աղոթքներին: Աստծո երկրպագությունը չպետք է կիսել Իր արարածի հետ ցանկացած ձևով, կամ տեսքով: Ըստ այդմ, գլուխ ալ-Աարաաֆի 7:194- մեջ Ալլահն ասում է.

(Բրիտանիկա Նոր Հանրագիտարան հատոր 8, էջ.95) Նա դարձավ զինվորների գլխավոր սուրբը:

¹¹⁹ Համախարհային Գրքի Հանրագիտարան հատոր 1, էջ.509

¹²⁰ Համաշխարհային Գրքի Հանրագիտարան հատու 11 էջ.146

¹²¹ Իբիդ հատոր 3 էջ.417

إِنَّ الَّذِينَ تَدْعُونَ مِنْ دُونِ اللَّهِ عِبَادٌ أَمْثَالُكُمْ فَادْعُوهُمْ فَلَيْسَ تَجِيبُوا
أَكْمَ إِنَّ كُنْتُمْ صَادِقِينَ

«Իրոք, նրանք, ում դուք կոչում եք աղոթքի մեջ, բացի Ալլահից, ձեր նման ստրուկներ են»:

Սա էր հանդիսանում Հիսուս Քրիստոսի և նրան նախորդող բոլոր մարգարեների ուղերձը: Այն հանդիսանում է նաև վերջին մարգարեի, Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) ուղերձը: Ուստի, եթե մահմեդականը կամ անհատը, ով իրեն մահմեդական է կոչում, աղոթում է սրբի, նա դուրս է գալիս Իսլամի սահմաններից: Իսլամը չի հանդիսանում ուղղակի հավատք, որտեղ անհատից պահանջվում է պայման, որ նա հավատք ընծայի, որ գոյություն չունի ոչ մի Աստված արժանի երկրպագության, բացառությամբ Ալլահի և որ Մուհամմեդը նրա վերջին առաքյալն էր, որպեսզի հասնեն դրախտ: Հավատքի այս հայտարարությունը թույլ է տալիս նրան, ով հայտնում է դա, մտնել Իսլամի դռները, սակայն գոյություն ունեն շատ գործողություններ, որոնք կարող են հակասել այս հայտարարությանը և գործողին վտարել Իսլամից այնքան արագ, որքան արագ նա մտել է: Նմանատիպ գործողություններից ամենալուրջը Աստծոց բացի որևէ այլ մեկին աղոթելն է:

ՄՈՒՍՈՒԼՄԱՆ ՈՉ ԹԵ «ՄՈՒՀԱՄԵԴԱԿԱՆ»

Մինչ Հիսուսի և բոլոր վաղ մարգարեների կրոնը, գոյություն ուներ հպատակություն Աստծո կրոնին, որը արաբերեն լեզվում հայտնի է Իսլամ անվամբ և դրա ճշմարիտ հետևորդներին պետք է կոչել Աստծո հպատակներ, ովքեր արաբերեն կոչվում են Մուսուլմաններ: Իսլամի մեջ աղոթքը համարվում է երկրպագության գործողություն: Հաղորդում են, որ Մարգարե Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Հպատակությունը հանդիսանում է երկրպագության գործողություն»:¹²² Ուստի մահմեդականները չեն ընդունում, որ իրենց կոչում են Մուհամեդականներ, այնպես, ինչպես Քրիստոսի հետևորդներին կոչում են Քրիստոնյաներ և Բուդդայի հետևորդներին կոչում են Բուդդայականներ: Քրիստոնյաները երկրպագում են Քրիստոսին և Բուդդայականները երկրպագում են Բուդդային: Մուհամմեդականներ տերմինը նշում է, որ Մուսուլմանները երկրպագում են Մուհամմեդին, որը բոլորովին այդպես չէ: Ղուրանի մեջ, Աստված ընտրեց Մուսուլման անունը, բոլոր նրանց համար, ովքեր իրապես հետևում են մարգարեներին: Մուսուլման արաբերեն լեզվով նշանակում է «մեկը, ով հպատակվում է Աստծո կամքին»:

وَجَاهِدُوا فِي اللَّهِ حَقَّ جِهَادِهِ هُوَ اجْتَبَاكُمْ وَمَا جَعَلَ عَلَيْكُمْ فِي
الدِّينِ مِنْ حَرَجٍ مَلَّةً أَوْ بِيْعًا إِبْرَاهِيمَ هُوَ سَمَّاكُمُ الْمُسْلِمِينَ مِنْ قَبْلُ
وَفِي هَذَا لِيَكُونَ الرَّسُولُ شَهِيدًا عَلَيْكُمْ وَتَكُونُوا شُهَدَاءَ عَلَى النَّاسِ

¹²² Մունան Աբու Դաուդ, հատոր 1 էջ, 387 համար 1474

فَأَقِمْوَا الصَّلَاةَ وَآتُوا الزَّكَاةَ وَاعْتَصِمُوا بِاللهِ هُوَ مَوْلَاكُمْ فَنِعْمَ
 الْمَوْلَىٰ وَنِعْمَ النَّصِيرُ

«... Այդ Նա է, ով անվանեց ձեզ Մուսուլմաններ մինչ և այս
 գրի Ղուրանի մեջ»: Ղուրան (22:78)

Ուստի, Հիսուսի ուղերձի իմաստը կայանում էր նրանում,
 որ մարդը պետք է երկրպագի միայն Աստծուն: Ամեն
 դեպքում, Նրան չպետք է երկրպագել իր արարածի
 միջոցով: Ուստի, Նրան չի կարելի պատկերել, փորագրել
 կամ նկարել: Նա մարդկային գիտակցությունից վեր է:

ՊԱՏԿԵՐՆԵՐ

